

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՊՐԱՅԻՆՈՒԹՅԱՆ 6-ՐԴ ՄԵՏԱԼԸ

Փեքինի մէջ ընթացող Ողիմպիական խաղերուն բաւական յաջող հանդէս եկող Հայաստանի մարզիկները ապահովեցին 6-րդ մետալը:

60 քիլոկրամ ծանրութեան մէջ բռնցքամարտիկ Հրաչեայ Զաւարեան Օգոստոս 19-ին իրաւունք ստացաւ մասնակցելու այս ծանրութեան կիսաեզրափակիչ հանդիպման, երբ իր Քորէացի հակառակորդը չհնարեց զնախաճար մրցումին: Այսպիսով Զաւարեան ապահովեց նուագագոյնը Պրոնկէ մետալը:

Օգոստոս 21-ին տեղի ունենալիք կիսաեզրափակիչ հանդիպումին Զաւարեանին կը սպասէ դժուար պայքար: Մրցակիցը 2004-ի Ողիմպիական խաղերու արծաթեան Ռուսաստանցի Ալեքսէյ Տիչչենկոն է:

Հայաստանի Ողիմպիական հաւաքականի այլ երկու անդամներ եւս կը շարունակեն պայքարը: Ազատ ոճի ըմբիշ Յարութիւն Ենոքեանն ու ատլետ Մելիք Զանոյեան տակաւին հանդէս չեն եկած:

Հայաստանի առաջին հինգ մետալները՝ բոլորն ալ պրոնկ, ապահովեցին ծանրորդներ՝ Տիգրան Վ. Մարտիրոսեանը, Գէորգ Դաւթեանը եւ Տիգրան Գ. Մարտիրոսեան, ինչպէս նաեւ յունահռոմէական ոճի ըմբիշներ՝ Ռոման Ամոյեանը եւ Եուրի Պատրիկէսը:

ՄԻՆՉ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԵԱՆ ՑՈՅՑԵՐՈՒՆ

ՍԿՍԱԾ Է ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՆԿՐԵՍԻՆ

Երկուշաբթի, Օգոստոս 18-ին սկսած է անհատներու անդամագրութեամբ Հայաստանի համաժողովրդական շարժումի կողմէ ստեղծուած ու Լեւոն Տէր-Պետրոսեանի գլխաւորած Հայ Ազգային Գոնկրէսին (ՀԱԿ):

Առաջին արձանագրութիւնները տեղի ունեցած են Հիւսիսային պողոտայի վրայ շարունակուող նստացոյցի վայրին մօտ: Անդամագրուելի ցանկացողները ալգտեղ՝ յատուկ գրասեղանի մօտ կը լրացնէին «Հայ Ազգային Գոնկրէս» վերտառութեամբ հարցաթերթիկը՝ ըստ ցանկութեան նշելով նաեւ, թէ ինչ ձեւով կրնան աջակցիլ ՀԱԿ-ին, օրինակ՝ գրասենեակ, ինքնաշարժ տրամադրելով կամ քարոզչութիւններ տարածելով:

Անհատները կրնան արձանագրուել անդամագրուելով ՀԱԿ-ին մաս կազմող կուսակցութիւններէն որեւէ մէկուն: Իսկ եթէ չեն ուզեր կուսակցութեան անդամագրուել, կրնան ուղղակի ձեւով արձանագրուել Գոնկրէսին:

ՀԱԿ-ի ղեկավար ներկայացուցիչ Լեւոն Զուրաբեան «Ազատութիւն» ռատիոկայանի հետ հարցազրոյցի մը ընթացքին ըսած է, որ այսպիսով իրենք կը փորձեն «մոբիլիզացնել իրենց ակտիւստներին» եւ այն անձինք, որոնք, չցանկանալով անդամագրուել ՀԱԿ-ին միացած որեւէ կուսակցութեան, կը պաշտպանեն Շարժման գաղափարները:



Տեսարան մը Հայաստանի ընդդիմադրութեան նախադրոյցներէն

«Սեպտեմբերին սպասուած են բաւականին լուրջ իրադարձութիւններ, բաւականին լուրջ պայքար», - շարունակելով ըսած է Զուրաբեան: - «Շարժման հիմնական կարգախօսը դարձել է Սերժ

Սարգսեանի հրաժարականը: Այդ քաղաքական պրոցեսը սկսելուց առաջ անհրաժեշտ է, որ մոբիլիզացուի մեր ամբողջ քաղաքական աջակիցների բազան»:

«Նպատակը այն է, որ մեր աջակիցների հետ հաստատուի անմիջական կապ, որ մենք յստակ իմանանք, թէ ինչով Գոնկրէսին

Շարք էջ 4

ԹՈՒՐԹԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ԵՐԴՈՂԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԸ ՍԿՍԻՆ»

Իսթանպուլի մէջ ընթացող «Թուրքիա-Աֆրիկա համագործակցութեան գագաթնաժողով»-ի մասնակից երկիրներու ղեկավարներու պատուին կազմակերպած ճաշկերոյթին ընթացքին ելոյթ ունենալով Թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Թայիբ Էրդողան յայտարարած է, որ Ատրպէյճան կատարելիք իր այցելութեան յետոյ «Կովկասի մէջ կայունութեան եւ համագործակցութեան միութիւն» ստեղծելու նպատակով բանակցութիւններ կը սկսին Հայաստանի հետ:



Թուրքիոյ վարչապետ Ռեջէփ Թայիբ Էրդողան

Ատրպէյճանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Թուրքիոյ մէջ այդ աշխատանքները արագորէն զարգացնելու միջոցով կը կարողանանք Հարաւային Կովկասը դարձնել կայունութեան եւ համագործակցութեան տարածաշրջան», - ըսած է Թուրքիոյ վարչապետը:

Միւս կողմէ Թուրքիոյ նախագահ Աբդուլա Կիլ անցնող շաբաթավերջին յայտարարած է, որ իր երկիրը թշնամաբար չէ տրամադրուած տարածաշրջանի որեւէ երկրի նկատմամբ: «Ֆրանսիոյ» ըստ մասին տեղեկացնելով կ'աւելցնէ որ կիւլը տակաւին վերջնական որոշում չէ կայացուցած Հայաստան - Թուրքիա ֆուտպոլային հանդիպումը Երեւանի մէջ ղիտելու՝ Սերժ Սարգսեանի հրահրի կապակցութեամբ:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ԴԵՍ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԻՆ ԾԵԾԻ ԵՆԹԱՐԿՈՒԾ Է «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ» ՈԱՏԻՈԿԱՅԱՆԻ ԴԵԿԱՎԱՐ ԼՐԱԳՐՈՂԸ

Երկուշաբթի, Օգոստոս 18-ի երեկոյեան Երեւանի կենդրոնական մասին մէջ յարձակման ու ծեծի ենթարկուած է «Ազատութիւն» ռատիոկայանի երեւանեան գրասենեակի ղեկավարի պաշտօնակատար Հրաչ Մելքոնեանը:

Այս յարձակումը կը յաջորդէ ճիշդ շաբաթ մը առաջ «Հայկական ժամանակ» օրաթերթի թղթակից Լուսինէ Բարսեղեանի վրայ կատարուած յարձակումին, որու ընթացքին Բարսեղեան կորսնցնելով ինքնագագացողութիւնը, շտապօգնութեան մեքենայով տեղափոխուած էր «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» բժշկական կեդրոն:

Իր դէմ կատարուածի մասնաւորութիւնները փոխանցելով Մելքոնեան պատմած է. - «Մօտաւորապէս 9:30-10-ի սահմաններում վերադառնում էի տուն: Անցնում էի Մաշտոցի պողոտայի այն մայրիկ, որտեղ Սայաթ-Նովայի արձանն է: Այդ այգուց ձայն լսեցի՝ իմ անունով ինչ-որ մէկը կանչեց: Բնականաբար, ես մտածեցի, դա իմ ծանօթ, բարեկամ, ընկերներէս մէկն է: Մոտեցի ընկնում էր արդէն, թէ ընկել էր, ես էլ լաւ չեմ տեսնում, մօտեցայ, որ տեսնեմ, ով էր կանչողը ու յանկարծակի սկսեց



«Ազատութիւն» ռատիոկայանի երեւանեան գրասենեակի ղեկավարի Հրաչ Մելքոնեան

հարուածել: Շատ անսպասելի էր: Հարուածում էր ձեռքով, շատ ամբողջով մարդ էր: Մօտաւորապէս քառասունին մօտ, երիտասարդ չէր: Հարուածելիս հայհոյում էր «Ազատութիւն» ռատիոկայանը եւ մեր հաղորդումները»:

Մելքոնեանի համաձայն, տեսնելով կը ճանչնայ յարձակողին. - «Մի հարուած չէր, երեւի մի հինգ րոպէ ձգուած էր այդ ծեծկու-

Շարք էջ 4

ԱԶԳԱՅԻՆ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԱԹՈՒՄԻՑ ԵՐԵՒԱՆ ԿԱՍ ՄԵՐ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՖՈ

Վերջին տարիներին մեր քաղաքացիների մի ստուգար հատուած հանգիստն անցկացնելու նպատակով ուղեւորուում է Վրաստան:

Սեւ ծովում հանգստանալը ձեռնտու է մի քանի պատճառներով. էժան է, վերջիվերջոյ ծով է եւ, ինչո՞ւ ոչ, որոշակի առումով մշակութի փոփոխութիւն է: Ինչեւիցէ, 2 շաբաթ առաջ հանգստանալու նպատակով ես նոյնպէս ուղեւորուեցի Վրաստան՝ Բաթումի, յոյս ունենալով վայելել Սեւ ծովի ընձեռած հարաւորութիւնները:



Վրաստանից Հայաստան մեկնող փախտականները

Երկար չձանձրացնելու համար՝ ընդամէնը պէտք է նշեմ, որ 7 օր հանգստանալուց յետոյ սկսուեց վրաց-օսեթական, իսկ աւելի ձիւղ՝ ռուս-վրացական պատերազմը, եւ ինչ խօսք, վերջին 3 օրը հանգիստ վայելելու յոյսերը յօդս ցնդեցին: Այն պահից էլ, երբ Բաթումիի վրայով սկսեցին սաւառնել ռուսական կործանիչները, ինչ-որ բան ինձ յուշեց, որ աւելի լաւ է հեռանալ եղբայրական Վրաստանից եւ որքան հարաւոր է աւելի շուտ: Սրա համար ես նոյնպէս ունէի պատճառներ: Նախ ինձ հետ էին ինձ համար շատ թանկ եւ սիրելի մարդիկ, յետոյ, որպէս հայ, մի տեսակ սրտի խորքում յարգում եմ օսեթների ազատագրական պայքարը, եւ վերջապէս, ոչ մի ցանկութիւն չունէի ամէն քայլափոխին հանդիպող վրացի զինուորականներին բացատրել, որ ես Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի եմ, «ղալաթ» եմ արել եւ եկել հանգստանալու ու վստահ եմ, որ ինձ զօրակոչելու իրաւական եւ բարոյական հիմքեր միայն իմ հայրենիքն ունի: Յետոյ՝ շատ դժուար էի ինձ պատկերացնում Յիսիմիայի մատուցներում, աւտոմատով, «կեցցէ Սաքարթվելօ», «կեցցէ Սահակաշվիլի» գոռալուց, մանաւանդ հաշուի առնելով այն, որ Սահակաշվիլիի նկատմամբ մի տեսակ անձնական հակակրանք ունեմ:

Շարունակելով վերոնշեալ տրագիկոմեդիան՝ պէտք է նշեմ, որ Երեւանից ինձ երկու վայրկեանը մէկ զանգահարող հարազատներս

ու ընկերներս ինձ յիշեցնում էին, որ Բաթումիում կայ հայկական հիւպատոսարան, որտեղից էլ շարասիւններով Հայաստան են տանում: Քանի որ կեանքում մի փոքր վատատէս եմ, անընդհատ ուզում էի համոզել, որ մեր հիւպատոսութիւնը մեր գլխին մի փորձանք կը բերի, որ Հայաստան առանց հիւպատոսութեան օգնութեան վերադառնալը մի տեսակ աւելի ապահով է: Ինչեւիցէ, տուրք տալով ընկերներին եւ հարազատներին պահանջներին՝ գնացի Հայաստանի հիւպատոսութիւն, որտեղից, ըստ իմ տեղեկութիւնների, շարասիւններ են գնում: Տեղում գեղեցկատես մի աղջիկ բացատրեց, որ գնում են հիւպատոսութեան կողմից վարձուած «Ֆորդերով», եւ որ մեզ տեղ-տեղ ուղեկցելու են վրաց ոստիկանները: Թերեւս առաջին անգամն էր, որ ես՝ որպէս ՀՀ քաղաքացի, ինձ պաշտպանուած եւ հպարտ գզացի: Այս երջանիկ գզացողութիւնը, սակայն, ընդամէնը մի քանի վայրկեան տեւեց: Երբ արդէն տեղաւորում էինք իրերը, մեր երթուղայինի վարորդը, որ հետագայում մեր գլխին մի քանի չար կատակներ էր խաղալու, չոր ձայնով պահանջեց հաւաքել գումարները: Երթուղայինի միջի ժողովուրդը, որոնց շարքում էի նաեւ ես, մի տեսակ անակնկալի եկանք, որովհետեւ այն գումարի դիմաց, որ պահանջում էր մեր բարեկամը, մենք հանգիստ կարող էինք տաքսի վարձել եւ հասնել սահման: Յետոյ, սակայն, յիշելով, որ մեզ ուղեկցելու են, ես անտարբերութեան մատնեցի այդ փաստը

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Լեւոն Տէր-Պետրոսեանի աջակցութեան ԱՄՆ-ի կենտրոնը ողջունում է Հայ Ազգային Գոնկրէսի հիմնադրումը: Գոնկրէսի ստեղծումը, ըստ մեզ, նոր շրջան է բացում Համաժողովրդական Ծարժման համար՝ Հայաստանում արմատաւորուած աւագակապետական ուժերի կազմաւնդման եւ ժողովրդավարական կառավարման համակարգի վերականգնման գործում:

Համոզուած ենք, որ Գոնկրէսին յաջողուելու է միաւորել հայ հասարակութեան առաջադէմ մասին՝ ի խնդիր քաղաքացիական պայքարի ազատ արձակման, քաղաքացիական հասարակութեան ձեւաւորման եւ երկրում օրինականութիւն հաստատելուն:

Կենտրոնը կոչ է անում՝ վերոնշեալ նպատակները կարեւորող իւրաքանչիւր հայորդու, աշխարհի որ մասում էլ նա լինի, անդամակցելու Հայ Ազգային Գոնկրէսին, մեր հասարակութեան առջեւ ծառայած խոչընդոտները միասնաբար յաղթահարելու եւ մեր ապագան ազգովին կերտելու նպատակով:

Կենտրոնը նաեւ յայտնում է, որ շուտով կը հրապարակի Հայ Ազգային Գոնկրէսին անդամակցելու կապակցութեամբ Հոչակագիր:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՄՆ-Ի ԿԵՆՏՐՈՆԻ
ՄԱՍՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

եւ երջանիկ դէմքով ու հիւպատոսութեանը գովք անելով պատրաստուեցի մեկնելուն:

Ախալցխայի մօտով դէպի Հայաստան տանող ճանապարհը, եթէ այն կարելի է ճանապարհ համարել, ստեղծուած էր յատուկ էքստրիմ սիրողների համար: Մօտ 400 կիլոմետրանոց ճանապարհն անցնում է լեռների եւ ձորերի միջով, եւ ընդամէնը, մի քանի հարիւր մետրի վրայ կարելի է տեսնել այն, ինչը քաղաքակիրթ երկրներում ասֆալտ է կոչուած: Նախ այն հանգամանքը, որ ամբողջ ճանապարհին ՀՀ քաղաքացիներին ոչ ոք չէր ուղեկցում, կարծես բոլորի համար էլ արդէն պարզ դարձաւ: Բայց համաձայնէք, մի փոքր տհաճ է բոլոր նորմալ մարդկանց համար այն, որ «Ֆորդը» ճանապարհին մի քանի անգամ կանգնեց, մեքենայի վրայ յայտնաբերուեցին բոլոր այն անսարքութիւնները, որոնք հարաւոր էր գտնել, եւ մենք մի քանի անգամ ստիպուած էինք մի քանի ժամով դադար տալ: Սակայն այս ամէնը նորմալ կը լինէր այն դէպքում, եթէ ՀՀ հիւպատոսութեան կողմից «վարձուած» վարորդը իմանար դէպի Հայաստան ճանապարհը:

Ես՝ որպէս Հնչակեան, իհարկէ, միշտ մեծ ցանկութիւն եմ ունեցել կորուսեալ հայրենիքը տեսնել, սակայն, հաւաստիացնում եմ Ձեզ, միայն եւ միայն լեզալ ճանապարհով: Մօտ 70 կիլոմետր ճանապարհից շեղուած մեր անբախտ «Ֆորդը» արդէն պատրաստուած էր անցնել Թուրքիան եւ Վրաստանը իրարից բաժանող փշալարերի

միջով, եթէ չլինէին այս վայճամբորդութեան մասնակիցների աղմուկն ու վրդովմունքի կոչերը:

Գիշերը՝ ժամը 5-ին, մենք, փոխանակ լինէինք հայ-վրացական սահմանի մօտ, գտնուած էինք Աստուած գիտի որտեղ, սակայն մի բան յստակ էր. առջեւում Թուրքիան է:

Ինչեւիցէ, երկար տառապանքներից եւ հորդորներից յետոյ մեր վարորդը վերջապէս որոշեց մեզ հետ բերել արդէն բաղձալի դարձած Հայրենիք, սակայն մի քանի ռոպէ մտածելուց յետոյ դէմքի լուրջ արտայայտութեամբ յայտարարեց, որ ճանապարհը չի յիշում, եւ մենք ստիպուած ենք սպասել որեւիցէ մեքենայի՝ ճանապարհը յտակցեցնելու համար: Եւ հենց նոյն պահին մեր Միքայէլ Շումախերը կարծես մտքի պայծառացում ունեցաւ եւ յայտարարեց, որ հիւպատոսարանն իրեն չի յանձնարարել մեզ հասցնել մինչեւ Երեւան, եւ մենք պարտաւոր ենք լքել իր մեքենան անմիջապէս հայ-վրացական սահմանին: Այստեղ արդէն ես վերջապէս հասկացայ, որ իմ անձնագրով հպարտանալը վաղաժամ է եղել, եւ այս ճամբորդութիւնը կազմակերպուել էր ոչ թէ ՀՀ քաղաքացիներին օգնելու, այլ «Հայրուր»ի տաղտկալի եթերը լցնելու համար:

Մնամ հայ-վրացական բարեկամութեան ջատագով:

ՆԱՐԵԿ ԳԱՄՍԵԱՆ
ՍԴՉԿ «ՍԱՐԳԻՍ ՏԵՐՈՒՆԻ»
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ-ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

THE QUALITY AND SAFE CHOICE...



AGBU PASADENA HIGH SCHOOL

2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104
(CORNER OF ALTADENA DRIVE AND MOUNTAIN STREET)

2008-2009 SCHOOL YEAR OPEN ENROLLMENT GRADES: 9-12

COLLEGE PREPARATORY ACADEMIC PROGRAM
HONORS & AP LEVEL INSTRUCTION

FOR MORE INFORMATION, PLEASE CALL 626-794-0363

ՏԱՐԱԾԱԶՐԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՂԲԱՆ

Միջազգային զետնի վրայ, յատկապես քաղաքական իրադարձությունները այնքան զիրար կը հրմշտեն որ մարդ դժուարութիւն կ'ունենայ ընտրելու: Այս քաղաքական շրջագիծէն ներս, կարելի չէ նաեւ անտեսել մարզականը, որուն հետ նաեւ սերտօրէն առնչուած է քաղաքականը: Ուրեմն նոյն տասնեակ մը օրերու ընթացքին, միեւնոյն ժամանակ տեղի ունեցան Պէյճիւնի միջազգային ողիմպիականները, Չինաստանին տալով միջազգային վարկանիշ, յատկապէս իրենց կազմակերպած փառահեղ բացման հանդիսութեամբ, եւ իրենց շահած մետալներով, շարունակուող ամերիկեան նախագահական ընտրութիւնները, Օպամա-Մքքէյն երբեմն մեղմ, երբեմն ալ սուր քննադատական ոճով, եւ վերջապէս, ասոնց կողքին, միջազգային քաղաքական թատերաբեմի վրայ յայտնուող, թէեւ յանկարծակի, եւ սակայն ժամանակէ մը ի վեր, կարծես փոքր կրակով կանգուն պահուած, Վրաստանի դէպքերով, զորս ողբերգութիւն որակեցինք:

Չինաստանի եւ Ամերիկայի պարագաները պահ մը մոռնալով, սոյն յօդուածով ակնարկ մը կ'ուզենք նետել Վրաստանի իրադարձութեանց վրայ, որոնք իրենց մէջ կը պարունակեն շատ աւելի լուրջ եւ շատ աւելի մեծ դէպքերու կարելիութիւնը: Ուրեմն ի՞նչ պատահեցաւ Վրաստանի մէջ անցնող տարւոյն օրերուն: Մէկ խօսքով պատերազմական գործողութիւններ Վրաստանի եւ Ռուսիոյ միջեւ, եւ Միացեալ Նահանգներու եւ Եւրոպայի միջնորդութեամբ ձեռք ձգուած զինադադարը:

Նախ սակայն պէտք է շուրջ 17 տարիներ ետք երթալ այս օր տեղի ունեցող տազնապին ակունքներուն հասնելու համար: Ուրեմն 1991-ին կը պատահէր Խորհրդային Միութեան փլուզումը, զոր Վլատիմիր Փութին կը նկարագրէր 20րդ դարու «ամենամեծ դժբախտութիւնը», իրեն յատուկ պատճառաբանութեամբ որ մասամբ մը կամ ամբողջութեամբ կը բացատրէ Ռուսաստանի վերաբերմունքը Վրաստանի նկատմամբ: Այս մասին սակայն քիչ յետոյ:

Խ. Միութեան փլուզումով երեւան կու գային զինք կազմող 15 անջատ հանրապետութիւններ, որոնցմէ ոմանք, Վրաստան, Ուր-

բանիա, Պելաուս, Մոլդովիա, եւ ասիական մուսուլմանական հանրապետութիւններ, յայտնի կամ քողածածուկ կերպով, տարանջատման առիթը օգտագործելով, ուզեցին նոր ուղիներ փնտռել, եւ այդ ուղիներու մէջ ամերիկեան, եւրոպական արեւելումը, եւ յատկապէս Նաթօյի մաս կազմելու մտադրութիւնը: Ի հարկէ այս տրամադրութիւնը կամ ծրագիրները երբեք հաշտ աչքով չէին դիտուեր նախկին կաշարութեան ժառանգորդ, յատկապէս Փութինեան Ռուսաստանի կողմէ: Այս վերջինը, սկզբնական շրջանին, Ելցինեան խարխափումներէն ետք, Փութինի իշխանութեան գալով, պիտի յաջողէր կարճ ժամանակուայ մէջ, ինքզինք գտնել թէ քաղաքականապէս եւ թէ մասնաւորաբար տնտեսական մարզի մէջ: Քաղաքական զետնի, Փութին եւ ապա, Փութին-Մետվետե իշխանութիւններով, Ռուսաստան ինքզինք կը հաստատէր, կամ աւելի ճիշտ, կը վերահաստատէր իբրեւ եթէ ոչ նոյնքան, եւ սակայն խիստ կարեւոր քաղաքական միակողմը, ինքզինք պարտադրող միջազգային քաղաքական կեանքէն ներս: Եթէ ժամանակին աշխարհի գերզօր տէրութիւններն էին Ամերիկեան եւ Խորհրդային երկիրները, այս վերջինին հրապարակէն հանուելով, մնացին Ամերիկան եւ Ռուսաստանը: Մինչ այդ, պատահեցաւ հետեւել պատկերը: Ամերիկայի գերզօր հանգամանքը, մանաւանդ միջազգային աստիճանութեան երեւան գալով, ուղղուած ոչ միայն Ամերիկայի դէմ, եւ ապա Ամերիկայի ձախակեր գինուորական արկածախնդրութիւնները Իրաքի եւ Աֆղանիստանի մէջ, տկարացուցին Ամերիկան, յատկապէս միջազգային թատերաբեմի մէջ իր ունեցած ազդեցութենէն, այնքան մը որ Ամերիկան ներկայիս պէտք կը զգայ դիմելու Եւրոպական «բարեկամ» պետութեանց - Ֆրանսա, Գերմանիա, եւ ուրիշներ, Վրաստանի եւ Ռուսաստանի միջեւ պայթած տազնապին կարգադրութեան: Մինչ մէկ կողմէ Ամերիկայի քաղաքական եւ տնտեսական տողարի անկում, եւ ներքին տազնապին, տկարացումով, իսկ միւս կողմէ Փութինեան Ռուսաստանի հզօրացումով, նոր դիմագիծ կը ստանային նախկին սովետական ազդեցութենէն դուրս ելած երկիրները, որոնց մէջ Վրաստանը:



ԻՆՉՊԵՆՍ ՎԱՐՈՒԵՅԱԻ ՎՐԱՍՏԱՆԸ

Սկզբնական անցումային շրջանի խարխափումներէն ետք, որոնք ծնունդ պիտի տային Վրաստանի ներքին դժուարութեանց, այսինքն Աբխազիա, Աճարիա եւ մանաւանդ Հարաւային Օսեթիա, որոնց երեքն ալ, քաղաքական եւ տնտեսական նաեւ փոքրամասնական բնակչութեանց առկայութեամբ, պիտի հետապնդէին իրենց անկախութիւնը: Այս վիճակը անշուշտ դուռ կը բանար ներքին լուրջ դժուարութեանց, առանց միջազգային միջամտութեանց: Ուրեմն, նոյնիսկ ՄԱԿ-ի կողմէ, խաղաղապահ դիտողներ պիտի հաստատուէին Վրաստանի եւ Հարաւային Օսեթիայի միջեւ: Այս կացութեան մէջ, Վրաստանի մէջ պիտի հաստատուէր Ամերիկա ուսած, Միքայէլ Սահակազվիլի իշխանութիւնը իր փրօ-ամերիկեան արեւելումով, եւ ՆԱԹՕ-ի մասնակցելու տրամադրութեամբ: Մէկ խօսքով, Վրաստան կը մտնէր արեւմտեան աշխարհաքաղաքական խմբակցութենէն ներս: Ի հարկէ, Վրաստանի երիտասարդ ղեկավարը ունէր իր արդարացումները, որոնք փաստուեցան որ «սխալ» էին, եթէ վերլուծելու ըլլանք այսօրուայ ողբերգութիւնը: Ինչպէ՞ս Սահակազվիլի կրնար մոռնալ որ շուրջ երկու հարիւր տարիներ, որոնց մէջէն եօթնամասունը, Խ. Միութեան մէջ, Ռուսաստանը ուղղակի տիրած էր իր եւ միւս 13 հանրապետութեանց վրայ, եւ ոչ միայն տիրած, այլ նաեւ ունեցած իր բազմատեսակ ազդեցութիւնները: Ասոնց մէջէն Ռուսաստանի ընձե-

ւած նպաստը Աբխազիայի, Աճարիայի եւ Հարաւային Օսեթիայի, մասամբ մուսուլման փոքրամասնութեանց տուած ուսական «passport» քաղաքացիութիւնը, որպէսզի այս օրերուն Ռուսաստանը իրաւունք ունենար զինուորապէս միջամտելու այս հողամասերէն ներս, իր քաղաքները պաշտպանելու համար: Ուրեմն այս երեւութապէս ընդհատակեայ տազնապար յանկարծ պիտի բռնկէր Սահակազվիլիի մէկ ձախակերութեամբ: Ճիշտ ողիմպիական խաղերու բացման օրը, երբ Պուշ եւ Փութին կը գտնուէին Չինաստան, վրացական ուժեր կը մտնէին Հարաւային Օսեթիա, եւ համրանքը վիճելի, շուրջ 2000 քաղաքացիներու մահուան պատճառ պիտի դառնային: Արդեօ՞ք Սահակազվիլի կ'ակնկալէր որ Ռուսաստան անտարբեր կամ ձեռնածալ պիտի մնար այս յարձակումի նկատմամբ, եւ կամ, կը խորհէր թէ ի՞նչ որ ալ պատահէ, Ամերիկան եւ Եւրոպան իրեն օգնութեան պիտի գային, մանաւանդ զինուորական զետնի վրայ: Ինչ որ ալ եղած ըլլան Վրաստանի հաշիւները, քաղաքական լուրջ խաղբութիւն էր իր կողմէ, մանաւանդ տգիտութիւն մեծ երկիրներու փոքր երկիրներու նկատմամբ վերաբերմունքին մէջ: Մեծերը, մենք հայերս լաւ գիտենք, ինչպէ՞ս կը վերաբերին իրենց «փոքր դաշնակիցներուն» մասին: Անոնք կ'օգտուին հարկ եղած ատեն, եւ յետոյ, աղտոտ լաթի նման կը լքեն զանոնք: Մեր պարագային, Սեւրի դաշնագրի տարեդարձի այս օրերուն, մենք շատ լաւ կը չիշենք դաշնակիցներու ընթացքը երբ մեզ կը լքեն ի նպաստ թուրքիոյ: Վրաստանի Հարաւային Օսեթիա

Շաք.ը էջ 19

ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՐԱՄԺԵՇՏ Է

ԵՐՔԵՔ ՈՒՅՏ ԶԵ ՎԵՐԱԲՆՆԵՆԱՌ ՅԵՐ ԱՊԱՐՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԻԱՍՏՆԹՅՈՒՆ ԿԵՆՏՐՈՆԵԱՆ

813 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway, Glendale, CA 91205
E-mail: BMaroniani@aol.com ONE EIGHT HUNDRED FOUR "HAJ-TAD"

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

ԴԱԻԻԹ ՇԱՐՆԱԶԱՐԵԱՆԻ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ՝ ՆԵՐԿԱՅ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ա.Թ.

Հայաստանի Համաժողովրդական Շարժման գլխավոր ղեկավարներին Դաւիթ Շահնազարեան շահեկան ու մտերիմ հանդիպում եւ ասուլիս մը ունեցաւ Լոս Անճելըսի հայկական զանգուածային լրատուութեան միջոցներու ներկայացուցիչներուն հետ՝ Կլէնտէյլի Հիլթըն պանդոլի սրահներէն մէկուն մէջ, Չորեքշաբթի, 13 Օգոստոս 2008, երեկոյեան ժամը 7:30-ին:

Հարիւրի շուրջ մամուլի եւ հեռուստատեսութեան ներկայացուցիչներ լարուած ուշադրութեամբ ու սրտամօտ հետաքրքրութեամբ հետեւեցան յարգելի գեկուցաբերի հայրենական նորագոյն յայտնութիւններուն՝ «Հայաստանում Ներկայ Իրավիճակը» ընդհանուր թեմայով: Լայն պատասխան վրայ ան փորձեց ուրուագծել հայրենի հերոսական ժողովուրդի եւ ընդդիմութեան փշոտ բայց փառապանծ ճանապարհը՝ նախագահական գեղծուած ընտրութիւններէն մինչեւ կաշառքները, ձերբակալութիւնները, բանտարկութիւնները, ծեծերը, ապա իշխանութիւններու կողմէ բազմիցս մերժուած բայց հետեւողականօրէն կայացած բազմասարիւր հազարաւոր ընդդիմադիրներու հաւաքներն ու երթերը Երեւանի պողոտաներուն մէջ, հասնելու համար մինչեւ այսօրուայ կարգապահ ու կազմակերպուած ազատագրական պայքարի նորագոյն շարժումները, մինչեւ քաղաքացիական հասարակութեան ինքնակազմակերպումի եւ անգոյ ճշմարիտ իշխանութեան ժողովրդավա-

րական այլընտրանքի՝ Հայ Ազգային Գոնկրէսի ստեղծումը:

Դաւիթ Շահնազարեանի հաւաստիացմամբ, նախագահական ընտրութիւններէն շատ առաջ նախածրագրուած էին բոլոր գեղծարարութիւնները, կեղծ ընդդիմութիւն խղարացող քաղաքական պատեհապաշտ ծաղրածուներու տխուր դերերը, տարբեր թեկնածուներու օգտին տրուած քուէարկութեան տոկոսներու վիճակագրական շինծու խեղկատակութիւնները: Ան նոյնպէս շեշտեց թէ Մարտի մէկը ծրագրուած էր շատ վաղուց, եւ թէ այդ օրուայ սպանդը Քոչարեանին անհրաժեշտ էր՝ արտակարգ դրութիւն հաստատելու, իր եւ իրեն յաջորդելիք Սերժ Սարգսեանի իշխանութիւնը պահելու համար:

Չեկուցաբերը վեր առաւ կարեւոր իրողութիւններու երկար շարք մը: - Ընտրողներու 10 տոկոսէն պակաս ձայներով իշխանութեան բռնազաւթումը Սերժ Սարգսեանի կողմէ՝ բանակի եւ ոստիկանութեան մեղսակցութեամբ, սեւազգեստ ու դիմակաւոր քրէական տարրերու շղթայագերծումովը Ազատութեան հրապարակի ընդդիմադիր անգէն ժողովուրդին դէմ: Հանրահաւաքներու մերժումը՝ որ կը նշանակէ հաւաքի մասնակից 150-200 հազար քաղաքացիներու դիմումներու մերժումը 60 անգամ: Եւրոպական կառույցներու աչք փակումը՝ համատարած կեղծիքներու, սպանդի, ազատ մամուլի արգիլման հանդէպ: Խորհրդարանի եւ Մարտի Մէկի խնդիրները քննելու

Շաբ.ք էջ 19

ՅԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ ՍՈՒՐԲ ՂԵՒՈՆԴ ՄԱՅՐ ՏԱԾԱՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

Ա.Թ.

Լոսանճելըսահայ մամուլը Ուրբաթ, 8 Օգոստոս 2008-ին հրաւիրուած էր Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի առաջնորդարանը՝ Պըրպէյնքի Կլէնօքս պողոտային վրայ:



Լոսանճելըսահայ մամուլի ներկայացուցիչները Առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեանի հետ

հանդիպման ներկայ էին «Ասպարէզ» եւ «Նոր Հասաստան» օրաթերթերու, ինչպէս նաեւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութեան ներկայացուցիչները: Ներկայ էին ու կարճ խօսք առին նաեւ կազմակերպիչ յանձնախումբի ատենապետ Տօթթ. Յարութ Եղազեան եւ Թեմական Խորհուրդի ատենապետ Յովսէփ Կանիմեան:

յին հանգանակութեան նոր արշաւի մը շնորհիւ, որուն մեկնարկը պիտի նշուի 14 Սեպտեմբերին տեղի ունենալիք համագաղութային տօնախմբութիւններով:

Մամուլի երեք ներկայացուցիչներն ալ հարցադրումներ ըրին ծրագրի գեղարուեստական յղացման, ճարտարապետական ոճի, շի-

նութեան պատասխանատու յանձնակատար ընկերութեան, շինութեան ընթացքին անհրաժեշտ նկատուած փոփոխութիւններու կիրառման եղանակի, եւ ծրագրի կատարման բարձր որակի ապահովման համար ձեռք առնուելիք վերահսկողութեան շուրջ: Յովնան Արքեպիսկոպոս, կարելիութեան սահմաններու մէջ, հակիրճ պա-

Գրառուած Թուական Mark Your Calendars

Հայաստանի Անկախութեան Օրուայ ՓԱՌԱՏՈՒՆ
Սեպտեմբեր 21, 2008

SUNDAY	MONDAY	TUESDAY	WEDNESDAY	THURSDAY	FRIDAY	SATURDAY
	1	2	3	4	5	6
7	8	9	10	11	12	13
14	15	16	17	18	19	20
21	22	23	24	25	26	27
28	29	30				

Armenian independence Day FESTIVAL

To reserve your booth
please call Nor Scrount Cultural Association
26ր կրպակները ապահովելու համար
Տեղադրեցէք Նոր Սերունդ Մշակութային Միութեան
(818) 391-7938



Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Սուրբ Ղեւոնդ Մայր Տաճարի շինանախագիծի մեկնարկը

Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդ՝ Յովնան Արք. Տէրտէրեան հակիրճ ուրուագծումն ըրաւ ծրագրի իրագործման ուղիին վրայ մինչեւ հիմա տարուած աշխատանքներուն: Ան ընդգծեց թէ այս երազի կենսագործման համար իրենց ջանքերը մէկտեղած են բազմաթիւ հոգեւոր եւ աշխարհական առաջնորդներ, համայնքի կազմակերպութիւններն ու միութիւնները՝ իրենց բարոյական ու նիւթական աջակցութեամբ: Այսօրուայ դրութեամբ, ծրագրի իրականացումը կը պահանջէ 17 միլիոն տոլար ընդհանուր գումարի յանձնառութիւն մը, որուն 11 միլիոն տոլարը (գրեթէ 65 տոկոսը) արդէն գոյացած է հանգանակութիւններու միջոցով: Մնացեալ 6 միլիոն տոլարը կամ 35 առ հարիւրը կը նախատեսուի ամբողջացնել ժողովրդա-

տասխաններով ջանաց բաւարարել հարցադրողներու հետաքրքրութիւնները:

Այսպէս, ըստ էութեան, տաճարի ընդհանուր յղացքին մէջ ուղղուած է պահպանել հայ դասական ճարտարապետութեան ոճական ընդհանուր յատկանիշները: Ժամանակակից ճարտարապետութեան արդի որոշ բարերար ազդեցութիւնները, միւս կողմէ, իրենց ուրոյն տեղն ունին տաճարի վերջնական ծրագրի ձեւաւորման մէջ: Մասնագիտական յանձնախումբը վերջին չորս տարիներուն աշխատած է բարօք լուծումներ գտնել կարգ մը որոշակի ճարտարապետական ու յարակից փորձագիտական խնդիրներու: Ասոնց գլխաւորներէն էր ինքնաշարժներու կան-

Շաբ.ք էջ 19

Massis Weekly

Volume 28, No. 29

Saturday, AUGUST 23, 2008

Thousands Pour Into Armenia From War-Stricken Georgia Armenia Scrambles To Restore Vital Supplies Via Georgia

YEREVAN -- Armenia sent repairmen and a convoy of fuel trucks to Georgia following the weekend explosion on a key Georgian railway bridge that severed the two South Caucasus states' main trade link with the outside world.

The bridge is located near the central Georgian town of Gori that was occupied by Russian troops just days after the conflict over South Ossetia escalated into an all-out war between Russia and Georgia.

Georgia's attempt to win back the breakaway region triggered a harsh Russian retaliation involving air strikes on military and civilian targets across the South Caucasus state. The Georgian government accused the Russians of blowing it up on Saturday, a charge strongly denied by Moscow.

Repairs on the heavily damaged bridge got underway on Monday. Georgian workers were due to be joined by 12 Armenian construction specialists who left Yerevan on Sunday. Armenia also reportedly sent a trainload of construction materials that will be used for rebuilding the bridge as well as civilian facilities in Gori.

Officials in Yerevan said they were assured by the Georgian side that the repairs will be complete in one or two days. But according to Reuters, Georgian railway officials expect to reopen the bridge within 10 days. Still, the news agency cited a spokesman for Azerbaijan's national railroad as saying that a smaller, disused rail bridge is

being prepared for use in the meantime.

The Georgian railway is the main transport link between Armenia and



Wounded Russian army soldiers
Pvt. Vladimir Litvinov, front, and Robert Simonian

the Georgian Black Sea ports of Batumi and Poti that process more than 90 percent of freight shipped to and from the landlocked country. Cargo traffic through the ports was seriously complicated by Russian air strikes on civil-



Georgian servicemen bury soldiers killed in the armed conflict between Georgia and South Ossetia

ian and military targets in Georgia that stopped only late last week.

With fuel, wheat and other basic commodities transported to Armenia mainly by rail, the bridge explosion created an even more serious problem for the Yerevan government. There

were renewed signs of fuel shortages in the country on Monday. In Yerevan, some gasoline stations again limited their sales to up to 10 liters per car, while others shut down altogether.

Not surprisingly, the government is anxious to restore fuel imports in the first instance. It sent on Sunday a convoy of 39 heavy trucks to Batumi's port terminal where officials say 1,800 metric tons of petrol were stockpiled by Armenian fuel importers before the Gori blast.

Armenia Major Evacuation Root for Westerners

Armenia evacuated thousands of its citizens and received a significant number of foreigners from neighboring Georgia over the weekend and on Monday as the Russian-Georgian military conflict increasingly escalated into an all-out war.

The Foreign Ministry in Yerevan said at least 7,500 Armenians spending their summer holidays on the Georgian Black Sea coast and some 2,000 foreign nationals, including relatives of Tbilisi-based U.S. diplomats, have entered the country since the outbreak of

Continued on page 2

Continued on page 3

Opposition Blames Government For Journalists Beating Radio Free Europe Bureau Chief Attacked In Armenian Capital

YEREVAN -- In what appears to be a politically motivated act of violence, the acting Chief of RFE/RL's Yerevan bureau was attacked on Tuesday night in downtown Yerevan. Hrach Melkumian had left his office and was on his way home at about 9:30 pm when an unknown assailant called him by name and approached him. The assailant beat him repeatedly while cursing the radio and denouncing RFE/RL's programs. Melkumian sustained broken teeth and bruises to his head and back.

"This is obviously not a random incident, but a targeted attack on our people and our programs," said RFE/RL President Jeffrey Gedmin. "This is the first time our Armenian service has suffered a physical attack in response to our reporting, and we expect the authorities to investigate thoroughly and respond with the speed and seriousness that this warrants."

Melkumian, an award-winning RFE/RL veteran journalist, served as Yerevan Bureau Chief in 2005 before transferring to Prague in 2006 to work as a broadcaster for the Armenian Service. He returned to Yerevan this past July after being named acting Bureau Chief.

Earlier this month Lusine Barseghian of the "Haykakan Zhamanak" daily was briefly hospitalized after being assaulted by unknown

Armenians Of Javakh Call For Federalization Of Georgia

Armenian organizations of Javakh are calling for the creation of a federation as the only way to preserve the territorial integrity of Georgia. According to their statement:

"Now when the military actions have ceased, and the dislocation of military forces in the country is slowly returning to the status quo of August 6; when the conflict sides and the international community are seeking for ways out of the situation and choosing ways of restoring the country's territorial integrity and sovereignty, it is obvious that it is mainly the peaceful population who suffer from attempts to solve ethnic problems through military ways, with political complications rather than a positive political change, we the non-governmental representatives of the Armenian population of Samtskhe-Javakheti and Kvemo-Kartli, proceeding from our concern about peace and stability in the country and the future of the country, find that:

For the restoration of the territorial integrity and sovereignty of Georgia, for an objective, fair and legal solution of

Turkey 'No Enemy' To Armenia

ANKARA -- Turkish President Abdullah Gul sent a reconciliatory message to neighboring Armenia on Saturday, saying Turkey is "no enemy" to any country in its region, as he mulled a possible landmark trip to Yerevan.

The conflict between Georgia and Russia shows the need for "early measures to resolve frozen problems in the region and... prevent instability in the future," said Gul in televised remarks in the central city of Nevsehir.

"This is our understanding on all problems. We are no enemy to anyone in the region," he said, reiterating a Turkish proposal to set up a regional forum for stability in the Caucasus.

Gul's conciliatory remark came in response to a question on whether he would accept an invitation by Serzh Sarkisian to go to Yerevan in September to watch a World Cup qualifying

match between Turkey and Armenia. He replied he was still evaluating the invitation.

Ankara has refused to establish diplomatic ties with Yerevan Armenia gained independence in 1991 because of Armenian efforts to secure international recognition of the Armenian Genocide. In 1993 Turkey shut its border with Armenia in a show of solidarity with its close ally Azerbaijan after Karabakh war of liberation.

Diplomats from Turkey and Armenia met secretly in Switzerland in July in a fresh effort to normalize ties following three rounds of talks in 2005 and 2006. No progress is so far publicly known.

Turkish and Armenian leaders have meanwhile met on the sidelines of international gatherings, including a Black Sea regional summit in Istanbul last year.

men as she left her parents' apartment block in Yerevan in the morning. She said they kicked and punched her without saying anything.

Barseghian had numerous bruises on her head, arms and feet and complained about sharp headaches as she spoke to RFE/RL later. "It was so unexpected," she said. "They attacked me from behind. When I cried out and attracted people's attention they ran away."

The journalist, whose newspaper boasts the highest circulation in the country, linked the attack to a recent series of articles by her that scrutinized the allegedly illicit activities of influential individuals close to the government. Those included the chief of Serzh Sarkisian's staff, Hovik Abrahamian, tycoon Samvel Aleksanian and the controversial mayor of Yerevan's Erebuni district, Mher Sedrakian.

Armenia's leading opposition groups have held the government responsible for both beatings. Main opposition alliance led by former President Levon Ter-Petrosian went farther, alleging that the journalists beatings was the work of the country's "kleptocratic" government. "We condemn that repugnant deed and declare that responsibility for them fully falls to the regime's leaders," it said in a statement.

Germany: Manipulation Of Documents Recognized But Not The Armenian Genocide

By Toros Sarian

Neither the German Parliament nor the German Government has declared the crimes committed by the Turkish Ottoman Empire against the Armenians as Genocide.

The German Parliament had paid its respects to the victims of the crimes committed by the Ottoman Empire on the 21st April 2005. The Christian Democrats, at the time the main opposition party, had moved a motion to remember the annihilation of the Armenians. The Parliamentary factions managed to agree upon the drawing up of a common resolution and this resolution was unanimously passed in June 2005; strangely enough the word Genocide was not mentioned once. At the centre of German parliamentarians concerns was not the recognition of the Armenian Genocide, but the reconciliation of Turks and Armenians. Already in the second paragraph Johannes Lepsius was explicitly praised for his engagement for the Armenians. The project of turning Lepsius's house in Potsdam into a memorial to his work is already eluded to this passage of the resolution: "Especially the work of Dr Johannes Lepsius who energetically and effectively campaigned for the survival of the Armenians should not be forgotten and with the aim of improving the relationship between Armenians, Germans and Turks should be maintained and tended to."

In the meantime, it has been proven that Germany carries a considerable burden of guilt for the Armenian Genocide. It is also well-known that Johannes Lepsius, the Evangelical theologian and friend of the Armenians, was a German Nationalist and supporter of the German Kaiser's expansionist policy. He despised the Turks and was like many Germans of the time an anti-Semitic. In July 2008 the Parliamentary faction "Die Linke" (The Left), asked for more information in the form of a Parliamentary question regarding the founding of the Memorial House in Potsdam near Berlin. They expressed doubts concerning the suitability of using the Lepsius House as a place where "the relationship between Armenians, Germans and Turks could be improved".

"Die Linke" reminded the Parliament that the collection of official documents published by Johannes Lepsius in 1919 in connection with the Armenian Genocide contained openly manipulated documents. The question as to who carried out this manipulation is up till this day open. It can only be assumed that not only Lepsius was involved but also the German Foreign Office. After the end of the war Germany was liable to be given some of the blame for allowing the Genocide. Therefore in order to diffuse the criticism before the Peace negotiations Lepsius was given the task of publishing the German documents pertaining to the Armenian Genocide during the First World War by the German Foreign Office in 1919.

Lepsius was seen as a staunch friend of the Armenians and also enjoyed good standing abroad, therefore his work came under less public scrutiny and was



Ulla Jelpke is a member of "Die Linke" (The Left) faction in the German Parliament. She consistently campaigned for the recognition of the Armenian Genocide.

accepted if not entirely believed. Unfortunately, the reason behind Lepsius publishing his collection of documents was simply to deflect blame for the Genocide away from the German government and military. As a German Nationalist Lepsius certainly did not want Germany's participation to become known, his task was to select documents in such a way as to prove that only the Turkish Government responsible for the deportations and the annihilation of the Armenians.

The Foreign Office declines from accepting the responsibility for the manipulations, but does not deny that documents in Lepsius's publication were manipulated. In the answer to the question to the Government it says "Lepsius's publication 'Germany and Armenia 1914-1918' is considered to be manipulated". With this statement the German government has for the first time admitted what journalist and publisher Wolfgang Gust had discovered many years before. Moreover, the Government officially declared that the collection of documents published in 2005 by Wolfgang Gust was based on documents which had been kept undisclosed in the political archives of the Foreign Office.

This official statement is therefore important as Wolfgang Gust in contrast to Johannes Lepsius examined the role of Germany in the Armenian Genocide with an open and critical eye. This has made him very few new friends in certain circles which have preferred not to have Germany implicated yet in another Genocide. Moreover because in the last century Germany has been the main player in two World Wars and was responsible for the Jewish Genocide, key establishment figures have encouraged the German public ignorance regarding this atrocity. Therefore it is not surprising that so few German historians have taken up the theme of Germany's role in the Genocide despite the ample supply of primary material.

Three years after the German parliament's resolution the German Government still declines in using the word Genocide in any of its statements and preferring formulations such as "tragic events" or "historical events". "The German Government greets all initiatives which serve to reappraise

the historical events of 1915/16. Judgements of these events should be undertaken by Historians. Judgements of these events should be undertaken by Historians". The position of the Foreign Office was made clear in the last paragraph of the statement in answer to the Parliamentary question. "The German Government believes that the historical confrontation with the events from 1915 to 1917 is the primary concern of the countries involved; Turkey and Armenia." The Foreign Office drafter of this contradictory statement is well-known to Armenian observers. His name is Gernot Erler and he is a historian, political scientist an Eastern Europe expert. As vice-chairman of the SPD (Social-Democrat Party of Germany) in Parliament, Gernot Erler had issued a statement regarding the German Parliament becoming involved in the Armenian Genocide question in 2001. Then he said "We believe that an official judgement of historical events is the task of Historians and not any random uninvolved Parliament"

In the USA and France such a statement from a leading Parliamentarian or Government Minister would more likely lead to strong protests and letters to the editor from the organized Armenian community. Armenian Organizations are working all over the world to ensure the official recognition of the Armenian Genocide delivering facts to those Governments which

still are hesitant in recognizing the brutal events as Genocide. In view of this, the reaction of the Armenian organization in Germany, where after France the most Armenians live within the EU, is unexplainable. The "Central Council of Armenians in Germany" did not criticize the scandalous statement of the German government but criticized the Left Party for posing the question. For the "Central Council" it was of little consequence that the German government used words gleaned from Turkish propaganda material, such as "tragic event" or that "the evaluation of the events should be left to historians". Moreover, they raised no voice of criticism that the word "Genocide" was again left unmentioned in an official government statement dealing with the annihilation of Armenians within the Ottoman Empire.

It is a scandal that an Armenian organization in a democratic county as Germany lacks the courage and determination to use the political avenues provided to counter the erroneous policy of the German political establishment. This strategy of the "Central Council" is even more scandalous when one examines the leadership of the "Council" and finds that it is in the hands of people who are members and supporters of an Armenian party which has for years demanded the hardest for the worldwide official recognition of the Armenian Genocide and has been vehement against those denying the events.

Armenia Scrambles To Restore Vital Supplies Via Georgia

Continued from page 1

large-scale fighting in South Ossetia on Friday.

Scores of cars and minibuses have been streaming into Armenia, bypassing Tbilisi and the main Georgian road leading to the Armenian border. The highway passes near airfields and other military facilities bombed by Russian warplanes.

The convoys of Armenian evacuees, led by Georgian police patrols, have moved along a longer road than runs through Georgia's Armenian-populated Javakheti region to the Bavra border crossing in northwestern Armenia. A kilometer-long line of vehicles could be observed there in the early hours of Monday. Each vehicle needed hours to go through rigorous passport and customs checks on either side of the frontier.

Security at the Georgian and Armenian checkpoints was visibly tightened. Armenian border officials there told RFE/RL that more than 1,500

vehicles carrying more than 7,600 people have crossed into Armenia.

Armenia also appears to be the main transit point for thousands of Western nationals caught up in the Georgian-Russian fighting. According to the Armenian Foreign Ministry, about 2,000 of them have entered the country from Georgia as of Monday afternoon, heeding travel advisories issued by the U.S. and European governments.

Some 130 Italians evacuated from Tbilisi returned home on Monday night on board a plane sent by the Italian government to Armenia's second largest city of Gyumri. Another plane was sent to Yerevan by the government of Poland. It was due to collect 180 mostly Polish citizens waiting there. According to a Spanish diplomatic source cited by AFP news agency, a group of Spanish tourists have already been also evacuated through Armenia.

The evacuees also included members of the families of the U.S. embassy staff in Tbilisi.

www.HayastanInfo.net
Armenian-English-German
News . Information . Comments

Mark Your Calendar

Saturday, November 8, 2008: St. Peter Armenian Apostolic Church 50th Anniversary Dinner and Celebration to be held at the Nazarian Center of the AGBU Manoogian Demirdjian School in Canoga Park- 6:00 p.m.

"Aram Khachaturian And His Ballets" A Spectacular Night By The Burbank Media Ballet Center

Job Well Done Natasha Middleton And Ruben Tonoyan

Lena

The evening of August 16, 2008, at Alex theatre was not a surprise: but very well anticipated, because of the hard work of two great directors, many great dancers and because of many efficient and hard working people. Beauty, colors, coordination and choreography and most importantly "khachaturian" music dominated the stage. The theatre was filled with joy. Just like Roupén Tonoyan mentioned, "people had missed these ballets". Armenians or non Armenians were thrilled and really into each and every performance.

The first selections were from Khachaturian's "Masquerade". The costumes were amazing (by Alla M. and Chisato D.) and choreography was excellent (by Natasha Middleton). Stephen Nelson, Ellen Rosa, Felicia Guzman and Moses Navarro were outstanding.

"The Warning" came second, again from the "Masquerade". Stephen Nelson and Ellen Rosa presented a couple's love and sorrow, expressed with the most beautiful and coordinated ballet movements.

"The Celebration of Their Escape" from "Spartacus" was one of the most heart warming and breath taking performances of this evening. The audience felt it and love was expressed in its utmost beauty. It was an escape towards a new beginning: Arsen Serobian and Aubrey Morgan were stunning.

Another breathtaking performance was "The Seduction", also choreographed by Ruben Tonoyan. Gabrielle Palmatier and Jekyns Pelaez both showed amazing dancing skills and Khachaturian was still perfect.




In the second intermission the old fashioned Armenian Wedding was about to take place under blue skies. Thanks to Alla Mushkambaryan and Chisato DuBoise, the audience was thrilled by this number and the costumes were magnificent. Edgar Nikolyan and Amara Baptist were at their best. Along with this number Ruben Tonoyan had really succeeded in presenting the Armenian culture and the Armenian Spirit, first to the dancers and then to the audience. The children with lit candles gave a beautiful message at the end of this ballet performance.

Things started to heat up when Edgar Nikolyan dominated the stage. A 22 year old graduate of the Armenian National Academy of Ballet, with amazing dancing skills and a great Armenian spirit. In "Adagio" and "Fakelle" along with Amara Baptist, Edgar was the center of attention,



"He was flying along with Armenian Ballets", breathtaking and stunning.



Top left: Kristine Gregorian Khachaturian's ballet "Gayane"

Top right: Edgar Nikolyan as Armen from "Gayane"

Bottom right: Arsen Serobian as Spartacus and Aubrey Morgan as Phrygia in excerpts from "Spartacus"

Photos by Olga Ivanova

As an Armenian Ballet dancer Edgar Nikolyan stood out all through this evening and he perfectionized the moment.

The evening came to a "winning" conclusion with "Sabre Dance", Khachaturian's Greatest Work. Everyone was fulfilled.

Thank You Natasha Middleton and Ruben Tonoyan for an excellent evening, with lots of good wishes.

New Musical Play Reinvents "Kach Nazar"

SAN GABRIEL, CA -- A new musical play in Armenian based on Hovhannes Toumanian's comic fairy tale "Kach Nazar" will debut on Sunday, August 24, 2008 at the historic San Gabriel Mission Playhouse. Playwright Ani Minasian incorporates Armenian cultural elements (dances, songs, idioms) and folk rituals and traditions to retell the story about a cowardly peasant who, through a series of misunderstandings and misrepresentations, becomes a revered hero and legend in his own time. The family-friendly staging of this classic story is meant for audiences of all ages.

Heavily grounded in physical comedy, folk dancing, singing and pantomime, the play draws its music from a wide variety of sources in the Armenian musical repertoire, including classical Khachaturian compositions, popular folk songs, and "estradayin" ballads, even one rabiz number. "For this show, we've incorporated the music that best tells the story and best develops the characters," explains Minasian, who is also producing and co-directing the show with Arpi Emirzian of Lark Society's "Zemire" crew, "and it does all work perfectly together, both theatrically and



Pantomime choreographer RB Dilanchian works with actor Vahe Karapetyan on a scene from "Kach Nazar - The Musical"

musically."

As diverse as the sources of musical inspiration are for this play, so are the varied origins of its cast and crew. The all-Armenian cast hails from all over the globe, from the more commonly cited countries of Armenia, Iran, Syria, and Lebanon, to the more exotic, such as

Italy and Venezuela. "During rehearsals, you hear the whole gamut of Armenian 'accents'," says Minasian. "Iranian-Armenian, Yerevan-Armenian, Western Armenian—and it's beautiful because we all blend so seamlessly together. It's a real Armenian melting pot."

While the show is not being produced by a community organization, it nonetheless has very community-centric objectives. The venue, which is halfway between Pasadena and Montebello, was specifically chosen to make Armenian arts and culture more geographically accessible to the Armenian community in the Montebello-Whittier area where Armenian cultural events are not as frequent as in Glendale and Pasadena. The affordable ticket prices are that way by intention so as not to

exclude anyone due to economic hardship and to encourage adults to bring their children to the show. In addition, a portion of net proceeds from the event will be used to help rebuild the water delivery system in the Armenian village of Jrashen where hundreds of families do not currently have local access to safe, clean water.

Tickets for the show, which are \$15 when purchased in advance and \$20 at the door, are available online at www.kachnazar.com, and at the following retailers: in Glendale at Abril Books (818-241-4112), and in Montebello at Goldex Jewelry (323-7267181) and Hye Bakery (323-722-8706). For more information, contact Tiramisu Enterprises at 213-825-0047 or email the production at info@kachnazar.com.

Armenians Call For Federalization Of Georgia

Continued from page 1

ethnic problems as a guarantee of stable and democratic development, it is necessary to change the structure of government of Georgia into that of a federation made of territorial units and a central government and establish the territorial units on the basis of the needs of preservation of the ethnic identity of ethnicities making up Georgia and their develop-

ment, hence calling for federal administration of Georgia in Samtskhe-Javakheti with its present borders and the adjacent areas of Kvemo-Kartli mostly populated with Armenians, empowering it to elect all the local governmental bodies with broad powers of self-government, and powers regarding culture, education, the social and economic policies, law and order, local government and protection of environment.

Lecture By Prof. Russel At NAASR On Armenian-Slavic Folklore Connections

BELMONT, MA -- Prof. James R. Russell, Mashtots Professor of Armenian Studies at Harvard University, will give the first lecture of NAASR's fall 2008 series on Thursday, September 11, at the National Association for Armenian Studies and Research (NAASR) Center, 395 Concord Ave., Belmont, MA. Prof. Russell's lecture will be entitled "The Rime of the Book of the Dove: Zoroastrian Cosmology, Armenian Heresiology, and the Russian Novel." The lecture will be a "Roman Jakobson Memorial Lecture" in honor of the pioneering linguist, Slavicist, folklorist, and one of the intellectual giants of the 20th century, NAASR Founding Member Prof. Roman Jakobson (1896-1982).

The spiritual ballad or poem, or Coleridgean "rime," the Book of the Dove (Rus. Golubinaia kniga, Stikh o golubinoi knige) exists in a number of transcribed oral variants, most of which were collected in northern and northwestern Russia—emanating most likely from the region of Great Novgorod. The poem relates the deep secrets, that is, the ones that concern cosmology. It has been called the "pearl of the Russian mythological epic."

Russian Text with Armenian and Iranian Sources

Many aspects of the Book of the Dove suggest an Iranian source, and in the Byzantine period the route of transmission would have been Armenia, most likely via oral teachings transmitted by itinerant preachers and minstrels, of the adherents of heterodox sects that flourished in Armenia at that time.

In this lecture, Prof. Russell will take a subterranean (and, at times, submarine) journey through the dark world of medieval Russian folklore and Armenian and Iranian religion and spirituality, with detours through the visionary poetry of Grigor Narekatsi and the groundbreaking novels of Vladimir Nabokov.

Prof. James R. Russell has been the Mashtots Professor of Armenian Studies at Harvard University since 1992. His books include Bosphorus Nights: The Complete Lyric Poems of Bedros Tourian, Armenian and Iranian Studies, The Book of Flowers, An Armenian Epic: The Heroes of Kasht, Zoroastrianism in Armenia, and Hovhannes Tlkurantsi and the Medieval Armenian Lyric Tradition.

Tribute to Roman Jakobson, a NAASR Founding Member

With Prof. Russell's lecture—one of numerous examples of his explorations of Armenian and Slavic linguistic, cultural, and literary connections—comes an opportunity to pay tribute to a predecessor at Harvard who looked at similar issues. Roman Jakobson is considered the father of modern structural linguistics, the founder of phonology, and one of the leading Slavicists of his time. A founder of the pre-revolution Moscow Linguistic Circle and later the famed Prague School of Linguistics, his work has been a profound influence on all who have followed him, including Claude Levi-Strauss, Roland

Barthes, Paul Ricoeur, Gilles Deleuze, and Jacques Lacan.

Among Jakobson's interests, albeit not one for which he is well known, was medieval Armenian literature and Armenian folklore. Jakobson received his bachelor's degree at the Lazarev Institute of Oriental Languages in Moscow (established in the early 19th century by the Armenian Lazarev/Lazarian family), where he learned Armenian and became interested in Armenian affairs.

Admission to the event is free (donations appreciated). The NAASR Center is located opposite the First Armenian Church and next to the U.S. Post Office. Ample parking is available around the building and in adjacent areas. The lecture will begin promptly at 8:00 p.m.

More information about the lecture is available by calling 617-489-1610, faxing 617-484-1759, e-mailing hq@naasr.org, or writing to NAASR, 395 Concord Ave., Belmont, MA 02478.

Armenian Missionary Association of America "Children Helping Children"

October 16 At Belmont Country Club

BELMONT, MA -- The Boston area Orphan and Child Care Committee of the Armenian Missionary Association of America (AMAA) will host its 13th annual event with the theme "Children Helping Children" this year on Thursday, October 16 at the Belmont Country Club. Hundreds of advocates and guests of the committee will again gather to celebrate and confirm their support for children in Armenia and Karabagh. The event has recently sparked an ever-widening participation from area supporters, including attendees from all Boston area churches. Invitations are available to all who share the goal of lifting up underprivileged children in Armenia and Karabagh.

This year's event will feature an elegant luncheon, extraordinary auction items, a breathtaking children's fashion show, and a thrilling live auction hosted by a special guest auctioneer. The children's fashion show will feature adorable child models and ex-

ceptional fashions by Elite Bebe of Belmont. Auction items will include Red Sox and Patriots tickets, jewelry, arts tickets, books, and more. A rare opportunity to view and purchase handmade arts and crafts direct from Armenia will also be made available to attendees. All proceeds from the event are donated to the AMAA Orphan and Child Care fund.

Founded in 1918, the Armenian Missionary Association of America (AMAA) is a nonprofit charitable organization that provides services to underprivileged youth through educational, relief, and mission ministries. AMAA is a nonsectarian Christian organization, which renders its services to those in need without discrimination. AMAA operates in twenty-two countries and often partners with other relief agencies to aid disaster stricken areas throughout the world. For additional information, visit amaa.org or contact Michele Simourian at 508-785-0569.



Armen Bayanduryan, Polko Khachatur, Elmira Khachaturova, Lela Khatchan, Nuhur Hachadze, Wilma Barachyan, Valeri Amirgjan, Anzhela Kazaryan, Ruben Dgenegyan, Robert Agajanyan



Mariam Khachoyan, Lilit Gogian, Renata Muskhelishvili, Sedrak Yagubova, Khatuna Khachatur, Anahit Poghosyan, Arsen Barandaryan, Karine Kazaryan, Eduard Khachatur, Park Arutyun

Three generations of actores and actresses: the pride of Georgian Armenians
"The Tbilisi Petros Adamyant Dramatic Theatre is 152 years old today"



The Friends of Armenian Arts Press Release

Մամուլի Յարդրդագրութիւն

Յարգելի Գարեհասկներ,

2008 թուին, Սեպտեմբեր-Յուլիտներ ամիսներին՝ առաջին անգամ լինելով, Թիֆլիսի Գետրոս Ադամյանի անուան Գետական Գայկական Դրամատիկական թատրոնը, 22 հոգիանոց խումբով պիտի ժամանէ Լոս Անճելես: Միացեալ Նահանգների և Գանատայի տարածքին պիտի ներկայացուին Գաբրիէլ Սունդուկեանի «Պէպօ» և «Տաթարալա», Գուրգէն Խանջեանի «Անեղակների պահակները», Յուզին Գլադստոն Օ'Նիլի «Սերը ծիփների տակ», Արմէն Բայանդուրեանի «Աղջկաս փեսացուները» և Փիլիք Շնտլի «Դուք ողջ լինե՞ք» փիլեսները՝ աւելի քան 18 խաղարկութեամբ:

Թատերախումբը պիտի գլխաւորէ Վրաստանի հոբիթոգրաբանի նորընտիր անդամ, Թիֆլիսի Գետրոս Ադամյանի անուան Գետական Գայկական Դրամատիկական թատրոնի զեղարուեստական ղեկավար, Վիրահայերի միութեան նախագահ, պարոն Արմենակ Բայանդուրեանը:

Կազմակերպիչներս այս նախաձեռնութեան՝ նկատի ունեցանք այն հանգամանքը, որ Գայ Ազգային Մշակոյթը Երկրի վրայ իբրև ազգ մեր գոյութեան, ապրելու մեր իրաւունցի ամենակարևոր վաւերութիւնն է:

Թիֆլիսի Գետրոս Ադամյանի անուան, Գայատանից դուրս գտնուող միակ Գետական Գայկական Դրամատիկական թատրոնը իարիւր և յիսուն երկու տարեկան է (152), Կովկասում գործող ամենաինն արիեստավար թատրոնը, նաև՝ հայկական մշակոյթի ճևարման, զարգացման և տարածման կարևորագոյն օջախներից մէկը:

Ազգային մշակոյթին իրենց ծառայութիւնը այնտեղ են բերել Գաբրիէլ Սունդուկեանը՝ Գետրոս Ադամյանը՝ Սիրանուշը՝ Վահրամ Փափագեանը և շատ-շատ այլ մեծանուն երախտաւորներ:

«Գայ Մշակոյթի Բարեկամներ», "The Friends of Armenian Arts" ոչ շահաբեր (non profit) միութիւնը անհրաժեշտ համարելով Ձեզ տեղեակ պահել ազգաշահ այս նախաձեռնութեան մասին, առաջարկում է Ձեր կամեցած չափով հովանաւորել ձեռնարկը և այդպիսով անմիջական մասնակցութիւն ունենալ:

Լոս Անճելեսում Թիֆլիսի Գետրոս Ադամյանի Անուան Գայկական Գետական Դրամատիկական թատրոնի 2008թ. Գիւրախաղերի Կազմակերպիչ Յանձնախումբ՝

The Friends of Armenian Arts 818.637.2191

Dear Friends:

Friends of Armenian Arts provide a unique service for our community.

For the first time in the Diaspora's history, Tbilisi's Petros Adamyant State Armenian Dramatic Theatre is invited to America.

Upon starting this expensive and complicated endeavor, we first thought of our responsibility to keep the Armenian nation and culture alive, flourishing, and reaffirming our right to exist.

The theatre is now 152 years old, the oldest active theatre in the Caucasus. It is the only state Armenian theatre outside Armenia, while also an important center that contributes to the development and gives a wide exposure to Armenian culture. Gabriel Sundukyan, Petros Adamyant, Siranush and many other famous Armenian artists have their names connected to the theatre.

We ask that you all honor and support with your presence the theatre's company on its 153rd anniversary. We also encourage patrons and benefactors to unite and help us lighten the financial burden of these events.

www.bravotbilisiarmeniantheatre.com

"Bravo" Tbilisi Petros Adamyant guest tour's organizing committee

ԱՐՈՒԵՍ

ՎԱՌԵԼ ԼՈՅՍԵՐԸ ՇՈՓՈՒ

(ԽՏԱՍԱԼԻԿ, ԵՐԱԺՅՏՈՒԹԻՒՆ ԻՂԱ-ԱՆԱՎԻՏ ՍԵՂՐԱԿԵԱՆ (ԽՐԼՈՊԵԱՆ), ԽՕՍԸՔ՝ ԱԻԿ ԴԵՅՐՄԵՆՋԵԱՆ, ԿԱՏԱՐՈՒՄ՝ ՇՈՓՈՒ ԳՐԻԳՈՐԵԱՆ, ԳԼԵՆԴԵՅԼ, 2008)

ԳԵՂՈՐԳ ԳԵՂՈՐԳԵԱՆ

Հրապարակում է ուշագրավ մի նոր խտասալիկ, որը ձօնուած է մարդու սրբագոյն զգացումների բացայայտման՝ հայրենասիրութեան եւ ազգային գիտակցութեան նուրբ ծալքերի ու հարստութեան գեղարուեստական կերպարաւորման: Այն պատգամում է այդ վեհ զգացմունքներով ու գիտակցութեամբ վառել հայ մարդու հոգու լոյսերը: Այնտեղ ներդաշնակուած են իդա-Անահիտ Սեղրակեանի կենսուրախ ու ոգեշնչող ազգային մեղեդիները, Աւիկ ԴեյրմենՋեանի ապրուած բանաստեղծութիւնները եւ Հովիկ Գրիգորեանի վարպետ կատարումը:


Իդա-Անահիտ Սեղրակեանի անդրանիկ խտասալիկը նուիրուած էր կրօնական երաժշտութեան: Նա փառք էր տալիս Աստուծոյ իրեն շնորհած բոլոր բարիքների համար: Երգերը մեծ նուիրումով ու ստեղծագործօրէն կատարել էին շնորհաշատ երգիչներ Ռիմա Կարապետեանը, Անի Մալջեանը, Հովիկ Գրիգորեանը եւ Յովհաննէս Շահպագեանը: Աւիկ ԴեյրմենՋեանի գրքի շնորհանդէսը վերջերս տեղի ունեցաւ Հայաստանի գրողների միութեան տանը եւ Բոստոնի գրական շրջանակում եւ ունեցաւ մեծ յաջողութիւն: Հովիկ Գրիգորեանը փնտրուած երգիչ է աշխարհի գրեթէ բոլոր հայ համայնքներում:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Խտասալիկի երգացանկը բացուում է հայրենիքով հրացած հայորդու ապրումներով: Նա ուրախութիւնից պարում է եւ շրջապատին փոխանցում վարակիչ լաւատեսութիւն, կենսուրախութիւն ու հոգեկան վերելք:

Յաջորդ երգը՝ «Զօն Հայոց Լեզուի», էլ աւելի է բարձրացնում ունկնդրի ազգային հպարտութիւնը՝ բացայայտելով հայոց լեզուի գերբնական խորքը, պատմական առաքելութիւնը եւ բարեմասնութիւնների առատութիւնը: Նրա փառաբանական աշխոյժ ոճը՝ շողախուած ներքին շոյանքով ու ինքնատիպ յուզականութեամբ վեհացնում է մարդու հոգին: Երրորդ երգը կերպարում է հայրենիքով անբաժան ապրող սփիւռքահային, որը իր կեանքի իմաստը տեսնում է Հայաստանի ու հայութեան մէջ եւ չի հաշտուում օտարութեան մէջ մնալու եւ թաղուելու գաղափարի հետ: Այս զգացմունքախառն գաղափարական մթնոլորտը մատուցուում է օրորուող հասկերի շաշիւնի, Սեւանի լճի ալիքների ծփանքի եւ հայկական ձորերի խորհրդաւոր արձագանգների ինքնատիպ ներդաշնակութեամբ, որը երկձայն չնչեղութեամբ վարպետօրէն կատարում է Հովիկ Գրիգորեանը: «Դէպի բարձունքը» գողտրիկ երգը արտապատկերում է հայրենասէր սփիւռքահայի ներաշխարհի մի այլ երես՝ երազային, բաց ոչ մեկամաղձոտ երեսը, երբ նա իր երեւակայութեան մէջ սաւառնում է հայրենի լեռներում, որտեղ նա գտնում է հոգեկան բաւարարութիւն ու հանգիստ:

ՇՆՈՂԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ
Հայ երիտասարդի հետ ամուս-



նացած իտալուհուն հարցնում են, թէ ինչպէս է նա գնահատում իր կողակիցի ծայրայեղ հայրենասիրութիւնը: Նա պատասխանում է. «Այն ով հայրենիք չի սիրում, նա չի կարող սիրել ընտանիքն ու իր կիրնը»: Սոյն տեսակէտը պաշտպանում են նաեւ խտասալիկի հեղինակները:

«Մայր իմ պաշտելի» երգն ունի ինքնատիպ կառուց ինչպէս իր երաժշտական, բանաստեղծական, այնպէս էլ կատարման առու-

մով: Այն սկսում է «մայր» կերպարի առաջացրած մեղմ ու նուրբ զգացումներով, որին յաջորդում է գովաբանական բարձր տրամադրութիւնը, որտեղ բացայայտում են մօր բարեմասնութիւններն ու սիրանքները: Ապա պատկերում են որդիական խնդրանքներն ու նորից մօր գրկում լինելու նրա մանկական երազանքները: «Հայր իմ թանկագին» երգում Երիտասարդի հօր մահուան բօթը ցնցում է նրան ու նա մտնում է խոհերի ու զգացմունքների մի աշխարհ, որտեղ վիշտը, անորոշութիւնը, յոյսը, կարօտը եւ անցած գեղեցիկ օրերի յուշերը միաձուլում են իրար: Այդ ալեկոծութիւնների մէջ յաղթանակում է այն հաւատքը, որ օրինակելի հայրը յաւետ պիտի ապրի իր ու գալիք սերունդների մէջ որպէս պատգամաբեր, որպէս ուղեցոյց լոյս, որպէս ներշնչման աղբիւր: Այդ իմաստով հայրն անմահ է: Սոյն գիտակցութիւնը բերում է լաւատեսական մի գեփիւռ:

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ

Սէրը արուեստի անբաժան ուղեկիցն է: Արուեստագէտը չի կարող սէր չէրգել: Իրաւ սէրը միացնող, ազնուացնող եւ վեհացնող ուժ է: Այն լիցքաւորում է մարդուն ու վանում է չարը: Սէրն առաջանում

է, երբ պարմանը զգում է, որ իր սիրտը գտնուում է մի հոգատար պարմանուհու հոգում: Կեանքը դառնում է գարուն: Իր հոգին մերթ թոնում է բազմագոյն մարգագետնի ծաղիկներով եւ մէկ էլ ծիծեռնակի նման խելայեղօրէն սաւառնում է երկնքում: Կեանքը դառնում է երգ ու պար: Յանկարծ թերահաւատութիւնը պատում է նրան: Նրան տանում է այն միտքը, որ այդ բոլորը կարող է երազ լինել: Վարդն առանց փուշի չի լինում: Հոգին տառապում է սիրոյ վեհութեան ու կասկածի փուշերի միջեւ: («Գուցէ երազ է»)

«Ապրող երազում» մենք սիրոյ այլ ըմբռնում ենք տեսնում: Սիրոյ երազում ենթական ապրում է իրաւ սիրոյ բոլոր բարեմասնութիւնները: Արթուն վիճակում սէրը անհետանում, անէանում է՝ բերելով տիրութիւն ու մենակութիւն: Իրաւ սէրը երազում է, արթուն պահին այն կորչում է կեանքի փոթորիկներում, դժուարութիւններում եւ կենցաղային յարաբերութիւններում: Այնպէս, ինչպէս գիշերն ու ցերեկը յաջորդում են իրար, այդպէս էլ սիրոյ տիրապետութեան շրջանն ու նրա անէ-

Շաբ.ք էջ 19

Advertisement for 'The Friends of Armenian Arts' featuring 'BRAVO' TBILISI ARMENIAN THEATRE. It lists three plays: 'My Daughter's Fiances', 'The Cave Dwellers', and 'Pepo'. It includes dates for performances in Fresno on Sunday, September 14, 2008, at 1:00 P.M., 4:00 P.M., and 7:00 P.M. The Tower Theatre is located at 815 E. Olive Ave., Fresno, CA. Contact information for tickets is provided.

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

«ՀԱՅ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀՈՒՆՁՔ»-Ի ԴԱՇՏԱՅԱՆԴԵՍԸ

Շատ գեղեցիկ ու նոր գաղափար մը յղացած էր Հայ Աւետարանական Միացեալ Մարմինը, գլխաւորութեամբ եղբայր Խաչիկ Շահինեանին:

Կիրակի, 7 Յունիս 2007ին կազմակերպուած էր ընտանեկան դաշտահանդէս մը Փասատինայի Victory park-ին մէջ: Դաշտահանդէսին անունը կը կրէր Հայ Ինքնութեան Հունձք:

Եղբայր Խաչիկ Շահինեանին հարց տրուեցաւ թէ ինչ կը նշանակէ Հայ Ինքնութեան Հունձք ըսելով: Եղբայր Շահինեան բացատրելով սոյն

ինքնութեան արշաւի միտքը եւ բոլոր շրջանի եկեղեցիները միասնաբար աջակցած էին սոյն գաղափարին:

Եղբայր Շահինեան իր բացման խօսքին մէջ շեշտեց մեր ինքնութեան ժառանգը փոխանցուած է մեզի մեր պապերէն: Շատ ժողովուրդներէ առաջ ընդունած ենք քրիստոնէութիւնը եւ ունինք գրականութիւն եւ ճարտարապետութիւն: Դարերու ընթացքին մեր ազգային



գաղափարը, շեշտը դրաւ հայ ժողովուրդի ինքնութեան ու գոյատեւման անհրաժեշտութեան մասին: Շեշտը դրաւ Հայը միշտ հայ եւ քրիստոնէայ պահելու մասին:

Բացումը կատարուեցաւ Հայաստանի ու Միացեալ Նահանգներու հիմներով: Ապա էտի Մոսկովեան խօսելով հայ նահատակներու եւ Ամերիկեան զինուորներու զոհաբերութեան մասին ըսաւ որ միշտ պէտք է յիշենք մեր աղօթքներու մէջ մեզմէ առ յաւէտ բաժնուած հայ եւ ամերիկացի զոհուածները:

Եղբայր Խաչիկ Շահինեան տարի մը առաջ յղացած էր այս հայ

ճարտութեամբ յաղթահարած ենք մեզ խախտել ուզող բազմաթիւ թշնամիներուն:

Յայտագիրը շարունակուեցաւ «քրիստոնէութիւնը եւ հայոց պատմութիւնը» նիւթը ներկայացուց Մաշտոց Գոլէճի տնօրէն Կարպիս Տէր Եղիայեան: Սահակ Մեսրոպ վարժարանի աշակերտները ներկայացուցին Գէորգ Էմինի «Այբուբեն» խմբային արտասանութիւնը:

Յաջորդաբար ողջոյնի խօսքերով ելոյթ ունեցան Վերապատուելի Փոլ Տօքթորեան, Պատուելի Գալվին Սաղրեան, Պատուելի Քարլոս Հաճեան, Վերապատուելի Ներսէս Պօյաճ-



Կարպիս Տէր Եղիայեան:

Դոկտ. Տէր Եղիայեան շեշտը դրաւ հայ քրիստոնէայ հաւատքի ու ազգային իրերու պահպանման ու անհրաժեշտութեան, ինչպէս նաեւ Հայաստանի շուրջ հաւատքով ու երկիրդածութեամբ համախմբուելու անհրաժեշտութեան մասին:

Հուրիկը՝ արտասանելով բանաստեղծ Ժագ Ս. Յակոբեանի «Ինքնութիւն» քերթուածը:

Յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին Փասատինայի Ալֆրէտ եւ Մարկրիթ Յովսէփեան եւ Սահակ եւ Մեսրոպ վարժարաններու աշակերտները իրենց ասմունքներով ու պարերով:

Եղբայր Մանօ Ակիւլեան խօսք առնելով անգլերէն լեզուով կոչ ուղղեց ներկայ երիտասարդութեան հաւատքի ու քրիստոնէութեան անհրաժեշտութեան, որ հեռու մնան գէի կեանքէ, որոնք կը պղծեն հայ երիտասարդութեան բարոյականութիւնը եւ ինքնութիւնը:

Հայ Ինքնութեան հունձքի ազգային ու եկեղեցական դաշտահանդէսը վերջ գտաւ երեկոյեան ժամը 8:00-ին:

Հայ Աւետարանական Եղբայրներու Եկեղեցուց կազմակերպած դաշտահանդէսը ունէր խորհուրդ ու պատգամ:

Գնահատանքի ու քաջալերանքի արժանի ձեռնարկ մըն էր: Այսպիսի ձեռնարկներ պէտք է կազ-



Քրիստոնէական ու եկեղեցական երգերով ելոյթ ունեցան Կարօ Սիւրահեան, Սալբի Քէշիշեան եւ Սօսի Ատուրեան, մասնակցութեամբ Հայ Երիտասարդական Նուագախումբին: Ասմունքով ելոյթ ունեցաւ

մակերպուին պահելու համար սիրուքի հայ ժողովուրդի եւ մանաւանդ հայ երիտասարդութեան հայրութիւնը, ինքնութիւնը եւ անոնց քրիստոնէական հաւատքը:

Ներկայ մը

ԱՅՆԹԱՊՑԻ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայ Այնթապցիներու Մշակութային Միկութեան վարչութիւնը որոշած է «Նոր Այնթապ 2008» տարեգիրքին մէջ լայն տեղ յատկացնել այնթապցի ծնողներու գաւակներուն եւ բոռներուն, իրենց շրջանաւարտութեան աոիքով:

Ուստի կը խնդրենք այն բոլոր շրջանաւարտ-շրջանաւարտուհիներէն, որոնք վերջացուցած են իրենց երկրորդական կամ համալսարանական ուսումը, 2008-ին, հայ կամ ոչ հայ հաստատութիւններու մէջ, թող հանին վարչութեան ուղղարկել իրենց ամփոփ կենսագրութիւնները եւ լուսանկարները, 2008 Սեպտեմբեր 15-էն առաջ, հետեւեալ հասցէին:

Վ.Ա.Ր.ՉՈՒԹԻԻՆ
ՀԱՅ ԱՅՆԹԱՊՑԻՆԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻԻՆ

ARMENIAN AINTABTZY CULTURAL ASSOCIATION
c/o Mr. Harold A. Demirjian
13100 Addison Street
Sherman Oaks, CA 91423

ATTENTION

TO ALL 2008 AINTABTZY GRADUATES:

The board of directors ofr AACCA has decided to publish the names of all 2008 graduates who have Aintabtzy parents and or grandparents, and have graduated from a high school, college or university of Armenian or non Armenian origin.

If you are interested in havingb your name included, please send a copy of your biography with a picture to the follorwing address before September 15, 2008.

Armenian Aintabtzy Cultural Association
C/O Mr. Harold Avedis DeMirjian
13100 Addison Street
Sherman Oaks, CA 91423

ԿԻՐԱԿԻ 8/24/2008



Մի Միասնաբար
Քաջ Նազար

Երաժշտական Թատերգութիւնը

Tickets:
\$15 Presale
\$20 At Door

818.243.4112
323.726.7181

San Gabriel Mission Playhouse
320 South Mission Drive
San Gabriel, CA 91776

ԱՐԴՅՈ՞Ք ԱՆՁԵԼԵՍՑԻՆԵՐԸ ՊԱՏՐԱՍ ԵՆ ՄԵԾ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ

Անցյալ ամիս, Ամերիկայի Երկրաբանական Հետազոտությունը տեղեկացրել է, որ Հարավային Կալիֆոռնիայում գալիք 30 տարիների ընթացքում վտանգորեն տեղի է ունենալու 6.7 հզորությամբ կամ ավելի մեծ երկրաշարժ: Երկրաշարժ, որը պատճառ կարող է դառնալ հսկայական վնասների, ներառյալ էլեկտրականության, ջրի եւ առողջապահական ծառայությունների կորուստի:

Արդյո՞ք ձեր ընտանիքը ունի բավականաչափ ջուր, ուտելիք եւ անհրաժեշտ պարագաներ դիմակայելու ամբողջ շաբաթվա ընթացքում: Ինչպե՞ս պետք է դուք կապնվեք ձեր ընտանիքի եւ ընկերների հետ, եթե ձեր հեռախոսները չեն աշխատում: Գիտե՞ք ինչպե՞ս համել տուն, առանց արագընթաց ճանապարհների: Պատրաստ լինելը շատ ճակատագրական է ձեր եւ ձեր ընտանիքի համար, որովհետեւ աղետները կարող են մեծածավալ վտանգ սպառնալ հանրային առողջությանը:

Լուս Անջելես Երջանի Հանրային Առողջապահական Բաժանմունքը առաջարկում է ընտանիքներին ստեղծել եւ քննարկել արտակարգ իրավիճակների դեպքում հաղորդակցվելու ծրագիր եւ պատրաստել արտակարգ իրավիճակի պայուսակ: Ապահով եղեք, որ հաղորդակցվելու ծրագիրը նախապես գրված լինի, որովհետեւ աղետների ժամանակ էլեկտրական սարքերը կարող են չաշխատել: Եվ քանի որ մենք երբեք չգիտենք թե որտեղ կարող էք լինել, երբ աղետը պատահի, ապա ամեն մեկը պետք է ունենա իր արտակարգ իրավիճակի պայուսակը ե՛ւ տանը, ե՛ւ դպրոցում, ե՛ւ աշխատանքի վայրում, ինչպես նաեւ ինքնաշարժի մեջ:

Արտակարգ իրավիճակների հաղորդակցվելու ծրագիրը պետք է ներառի հետևյալը՝

- Ընտանիքի ամեն մի անդամի տեղեկությունները
- Քաղաքից դուրս գտնվող բարեկամների կամ ընկերների անունները, հասցեները եւ հեռախոսահամարները
- Որեւէ տեղական վայր, հանդիպելու համար
- Որեւէ շրջանային վայր, հանդիպելու համար
- Փրկություն հավաքավայր
- Արտակարգ իրավիճակների պայուսակը պետք է ներառի հետևյալ հիմնական պարագաները՝
 - Զուր - մեկ գալուստ ամեն մեկ անձի համար, ամեն օրվա համար՝ խմելու եւ մաքրման
 - Ուտելիք - ինչպիսիք են՝ պահածոյացված եւ չոր ուտելիք, ինչպես նաեւ բացիչ:
 - Կանխիկ դրամ եւ կարեւոր փաստաթղթեր - մանր թղթադրամ եւ մանրադրամ, անձը հաստատող փաստաթուղթ, տան փաստաթղթեր, ապահովագրության թղթեր, բժշկական քարտեր, բարեկամների տեղեկություններ եւ այլն:
 - Հագուստներ - փոխնորդ շորեր եւ կոշիկներ ամեն մի անձի համար:
 - Լուսարձակիչ, ավելորդ (մարտկոցների) բատարեների հետ:
 - Բժշկական առաջին օգնության պայուսակ:
 - Դեղորայք - դեղատոմսով կամ առանց դեղատոմսի, դեղատոմսեր ամեն մի ընտանիքի անդամի համար, եթե անհրաժեշտ է:
 - Ռադիո եւ ավելորդ (մարտկոցներ) բատարեներ
 - Սանիտարական եւ հիգիենային պարագաներ - ձեռքի աղտահանիչ, թուղթ, աղբի տոպրակ, տակդիրներ եւ այլն:
 - Գործիքներ - պտուտակահան, աշխատանքային ձեռնոցեր, սուլիչ եւ այլն:

Զմուռանաք ձեր ընտանեկան կենդանիների համար անհրաժեշտ պարագաները:

Մրցանակ շահած «ՊԱՏՐԱՍ ԵՂԵՔ. ՄԻԱՄԻՆ ԳՈՐԾԵԼՈՒ» արշավը հատուկ ստեղծվել է տեղեկացնելու Լոս Անջելեսի տարբեր բազմաձև կազմակերպչին եւ բազմալեզու բնակչությանը: Արշավի նյութերը տարածվել են 12 տարբեր լեզուներով: Առողջապահական Բաժանմունքը հանձնառու է պաշտպանելու եւ լավացնելու Լոս Անջելեսի գրեթե 10 միլիոն բնակչությանը առողջությունը:

Շատ կարեւոր է ծրագրավորել հենց այսօր եւ ոչ թե սպասել մինչեւ հանրությունը արդեն այդ աղետի թիրախ դառնա:

Ուրեմն, արեցեք առաջին քայլը եւ պատրաստվեցեք հենց այսօր հաջորդ երկրաշարժը կարող է պատահել մեր սպասվածից ավելի շուտ:

Արտակարգ իրավիճակի պատրաստվածություն ձեր հավելյալ տեղեկությունները կարող եք գտնել www.lapublichealth.lacounty.gov.

ԱՋԱՊԱՐԵԱՆ ՏՈՐՍԸ

Շաբու Առաջիկա 15-էն

Այսպէս, Հեթումեան թագաւորական տնից, Սիսից, Կիլիկիայից մինչեւ Շիրակ...

Աջապահեան տոհմը բազմաթիւ ճիւղաւորումներ ունի եւ բնական է սերել է նաեւ մտաւորականներ, ուսուցիչներ, գրողներ:

Այս գրքի ծննդեամբ, ահաւասիկ մենք պարտական ենք Նազարէթ Աջապահեանին: Նազարէթը ծնուել է Պէյրուսթում, 1940 թուականին: Հաճախել է Լիբանանի Պետական Երաժշտանոցը իբրեւ վոկալիստ: Երգել է բազմաթիւ երգչախումբերում: Զբաղուել է դերասանութեամբ:

Յետագայում տեղափոխուել է Հայաստան, ունկնդրել Երեւանի գեղարուեստական-թատերական ինստիտուտի դասընթացներին: Աշխատել է Սուրբ Երեմիայի անուան թատրոնում: Մինչեւ հայրենիք գալը արդէն Նազարէթ Աջապահեանը Պէյրուսթի համարեայ բոլոր թատերա-

խումբերի դիմադրարն էր: Այս ամէնն յայտնի դարձան իրենց բոլոր մանրամասներով «Աջապահեան տոհմը դարերու ընթացքին» գրքի դարերի խորքը գնացող եւ մինչեւ մեր օրերում հասած կաթողիկոսների ու մտաւորականների սերունդների փառացի, նաեւ ողբերգական պատմութեան ուսումնասիրութեամբ:

Նազարէթ Աջապահեանն ինձ համար ազգային, հասարակական գործիչ էր, համեստ մտաւորական, հրատարակիչ, «Արաքս» տպարանի տնօրէն: Իր կենսագրութեան մանրամասները լրացրին, ամբողջացրին բարեկամիս Նազարէթ Աջապահեանի ազնիւ դիմանկարը:

Մեր հայ համայնքի բազմագոյն խճանկարը կարծես լրացաւ, ամբողջացաւ նոր գոյն ու երանգով՝ յանձինս կեանքով, հումուրով ու անսպառ եռանդով լեցուն Նազարէթ Աջապահեանի:

Փառք ու պատիւ հայ տոհմական գերդաստանների նահապետներին ու նրանց ազնիւ ժառանգներին:

«ԿԵԱՆՔԻ ՅՈՒՇԵՐ»Ի ՇԱՐՔԻՑ

Շաբու Առաջիկա 15-էն

պատասխանատու՝ Սամսոն Խան Թադէոսեանը եւ Գասպար Յակոբեանը:

Միջաւանջային այդ օրերին տարագիրներին խումբ խումբ ձերբակալում, եւ ուղարկում էին Իրանի տարբեր քաղաքներ, ոստիկանութեան խիստ հսկողութեան ներքոյ: Մտահոգ էի, որովհետեւ իմ ձերբակալման դէպքում ի՞նչ կը լինէր իմ բազմանդամ ընտանիքի վիճակը: Անտանելի էր իմ կացութիւնը գիշեր ու ցերեկ թագնուած էի, երբեմն դուրս էի գալիս տնից ա՛ն ու վախով, կրկին վերադառնում:

Անհամբեր սպասում էի Սրբա-

գան Հօր վերադարձին: Երբ Սրբազանը եկաւ, գնացի իրեն տեսութեան, եւ յայտնեցի որ թագնուած եմ: Սրբազան Հայրը հաւանեց իմ գոյշ կեցուածքը եւ յայտնեց որ Թէյմուր Թաշը (Ժամանակի պալատական նախարարը եւ թագաւորի մերձաւորներէից), շատ խիստ նկատողութիւն է արել, ասելով որ հայերը օգնում են Արարատի շրջանում ապստամբ քիւրդերին: Այդ հիման վրայ որոշուած է Թաւրիզ հաւաքուած տարագիրներին խիստ հսկողութեան տակ առնել: Ապա Սրբազանը - տեղեակ իմ նիւթական ծանր կացութեան - մի կողմից գումար տուեց ինձ:



10 իրերը, որոնք կ'օգնեն քո ընտանիքին յարգահարելու արտակարգ իրավիճակը

1. Ջուր
2. Անուս
3. Կաշիկներ և Կարկանդակներ
4. Նազուս
5. Արտաբերի
6. Արտաբերի
7. Գոտայ
8. Դաշի
9. Կրկն անոթներ
10. Պեպեր

Պայուսակ տեղեկությունների համար այցելե՛ք LACBT.org կամ զանգահարե՛ք 1-800-868-6228

Just Be Ready. Prepare Together.

ՊԱՏՐԱՍ ԵՂԵՔ ԱՋԱՊԱՐԵԱՆ

Public Health

ՔԱՉ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
 Ամէն Կիրակի երեկոյեան
 Ժամը 10:00-ից 12:30
 Կլէմտէյի 280-րդ կայանից

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑԸ
 CHARTER CABLE 280-ՐԴ ԿԱՅԱՆ
 (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)
 GLOBACAST SATELLITE
 ՀԻՆԳՇԱՔԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

ՍՓԻՒՌ-ՀԱՅՐԵՆԻՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ-ՀԱՍԿԱՑՈՒԹԻՒՆ

Շարունակում է 7-ԷՁ

Թիւնների, այսինքն իր պետութեան դէմ: Ոչ ոք չի ասում՝ դատական կամ օրէնսդիր իշխանութիւնը (որպէս պետականութեան կառույց) պէտք է վերանայ: Ոչ ոք չի ասում գործադիր մարմին չենք ուզում: Դա կը նշանակի անարխիա: Այնպէս, որ պետականութիւն եւ իշխանութիւն ճիշտ հասկացութիւնը կարեւոր է ժողովուրդ-պետութիւն եւ «սփիւռք-հայրենիք յարաբերութիւն»-ը ճիշտ հասկացութիւնը կարեւոր է ժողովուրդ-պետութիւն եւ «սփիւռք-հայրենիք յարաբերութիւն»-ը ճիշտ հասկանալու եւ ճիշտ հիմքի վրայ դնելու համար:

ՍՓԻՒՌ-ՀԱՅՐԵՆԻՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Պարզ է, որ Հայաստանի կառավարութեան կողմից սփիւռք-հայրենիք յարաբերութիւնը ընկալուած է որպէս սփիւռքի ֆինանսական ներուժի համախմբում եւ դրա ուղղորդումը դէպի Հայաստան: Սակայն այդ խնդիրը ուղղակի սփիւռքի բարեգործական կամ հարուստ բարեգործների եւ Հայաստանի պետութեան կամ Հայաստանի հասարակական հաստատութիւնների միջեւ յարաբերութիւնների խնդիր է: Սփիւռքի բարեգործական հիմնադրամները, եթէ ցանկանում են Հայաստանի պետական օղակներով Հայաստանը զարգացնել, իրենց իւրաքանչիւր կառուցի միջոցով, դա իրենց խնդիրն է: Բարեգործութիւնը միշտ էլ լաւ բան է ու արժանի է քաջալերանքի: Բայց դա բոլորովին այլ բան է, ինչ սփիւռք-հայրենիք յարաբերութիւնը կամ, աւելի ճիշտ ասած, սփիւռք-հայաստանապետութեան յարաբերութիւնը: Առաջինը հոգեւոր-մշակութային-մարդասիրական սկզբունքի վրայ է յենուած, իսկ միւսը՝ քաղաքական գաղափարախօսական սկզբունքի: Ուրախ կը լինենք, եթէ բոլոր բարեգործական հիմնադրամները, առանձին անձինք համագործակցելով իրարու հետ՝ աջակցէին Հայաստանի տնտեսական զարգացմանն ու սոցիալական վիճակի բարելավմանը: Չնայած, ցանկալի կը լինէր, որ դա իրականացուեր իւրաքանչիւր կա-

ռուցի միջոցով, որպէսզի օգնութիւնը կարողանար իր իսկ նպատակին ծառայել, եւ ոչ թէ դառնար մի խումբ անձանց յաւելեալ եկամուտի աղբիւր:

Իսկ ինչը «սփիւռք-հայրենիք» կամ, աւելի ճիշտ, սփիւռք-հայաստանապետութեան յարաբերութիւններին է վերաբերում, դա ոչ թէ բարեգործական յարաբերութիւն է, այլ գոտ քաղաքական հարց: Աւելի ճիշտ ձեւակերպում կարելի է անել: Սփիւռք-Հայաստան քաղաքական յարաբերութիւն կամ սփիւռքի հետ Հայաստան պետութեան քաղաքական յարաբերութիւն: Մենք ուզենք, թէ չուզենք, Հայաստանի կառավարութիւնը ուզի, թէ չուզի, ուղղակի առնչուում ու առնչուելու է այդ խնդրի հետ: Սփիւռքը միակուսակցական, միակարծիք եւ քաղաքականապէս մէկ հաւաքական միակարծիք է: Հայաստանի կառավարութիւնը սփիւռքի հետ իր յարաբերութիւններում պէտք է հաշուի նստի սփիւռքի բազմութեան հետ, նրա բազմատեսակ քաղաքական եւ հասարակական ուժերի հետ: Իսկ այդ ուժերը միշտ չեն, որ կը պաշտպանեն Հայաստանի իշխանութիւններին, նրանք նոյնպէս կարող են նաեւ խիստ քննադատել: «Սփիւռք-հայրենիք» յարաբերութիւնների մասին խօսելիս պէտք է պատասխանել այն հարցին, թէ սփիւռքի ո՞ր կուսակցութիւնը, ո՞ր քաղաքական ու հասարակական սփիւռքը ներկայացնելու: Ինչքան որ պարզուեց, սփիւռքը միակազմ ու միակարծիք է, ապա ինչի՞ շուրջ պէտք է սփիւռքը համախմբուի ու միաձայն մէկ կառուցով հանդէս գալ Հայաստանի քաղաքական ներկայացուցչի՝ այսինքն՝ Հայաստանի կառավարութեան հետ յարաբերութիւններում: Սփիւռքի եւ Հայաստանի պետութեան միջեւ քաղաքական յարաբերութիւնների ճիշտ մշակումն է կարեւոր: Սփիւռք-Հայրենիք յարաբերութիւններում պէտք է որոշուի. ի՞նչ չափանիշներով, իրաւական ի՞նչ սկզբունքով եւ ո՞ր մեխանիզմով կարելի է սփիւռքի հետ յարաբերուել: Եւ սփիւռքի իրաւունքը որպէս Հայ Ազգի մեծամասնութիւն՝ Հայաստանի քաղաքական կեանքում ինչպէ՞ս կամ ինչքանո՞վ է կայանալու: Թէ՛

Հայաստանի կառավարութեան եւ, թէ՛ նրան մաս կազմող կողմից իր անընդհատ խօսուած են սփիւռք-հայրենիք յարաբերութիւնների մասին: Եթէ Հայաստանի կառավարութիւնը իր իսկ արտասահմանում բնակուող քաղաքացու ամենատարրական, բայց ամենակարեւոր իրաւունքը՝ այն է ընտրութիւններին մասնակցելը, ռանկոխ է անում, ի՞նչ յարաբերութիւնների մասին է խօսքը:

Հայրենիքի օգնելը, նրա ժողովրդին ու նրա տնտեսական վիճակը զարգացնելը, բարեգործական, մարդասիրական աշխատանքներ կատարելը միշտ էլ ողջունելի են: Բայց պետութեանը աջակցելը կամ նրա քաղաքական, գաղափարական հայեացքները կիսել կամ չկիսելը պայմանաւորուած է քաղաքական կուսակցութիւնների, հասարակական հաստատութիւնների ու կազմակերպութիւնների աշխարհահայեացքների ու քաղաքական դիրքորոշումները պետութեան գաղափարների, քաղաքական տեսակէտների հետ համընկնելուց: Այդ սկզբունքից ելնելով է, որ Նախարարը չէ սփիւռքում ճակատ ստեղծել: Հայաստանի պետութեան կողմից ներքին եւ արտաքին քաղաքականութեան, այս կամ այն հարցի մօտեցման քաղաքականութեան որոշումները նոյնպէս եւ նոյնքան արձագանք են գտնում սփիւռքում, ինչքան Հայաստանում:

ՍՓԻՒՌ-ՀԱՅՐԵՆԻՔ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԻՆՉ-ՈՐ ԶԱՔՈՎ ԻՐԱԿԱՆԱՆԱԼ ՀԵՏԵՒԵԱԼ ՁԵՒԵՐՈՎ

Բարեգործական հիմնադրամները պէտք է բացեն իրենց գրասենեակները Հայաստանում: Մշակեն ռազմավարական նշանակութիւն ունեցող ծրագրեր, որպէսզի կարողանան աւելի ճիշտ Հայաստանի զարգացմանը նպաստել: Կոսմետիկ ծրագրերի միջոցով Հայաստանը չի զարգանալ: Հայաստանում աշխատող իւրաքանչիւր հասարակական նախաձեռնութիւն կամ կազմակերպութիւն պէտք է ինքն ուղղակի յարաբերութեան մէջ մտնի սփիւռքում նմանատիպ աշխատանքով զբաղուող կազմակերպութեան հետ: Նոյն կերպ կարող են նաեւ Հայաստանում աշխատող քաղաքական կուսակցութիւններն ու կազմակերպութիւնները յարաբերուել իրենց համակրող՝ սփիւռք-

քում աշխատող քաղաքական կուսակցութիւնների կամ նոյն գաղափարները կրող՝ կազմակերպութիւնների հետ:

Հայաստանի պետութիւնը պէտք է առանց խտրականութեան հաշուի նստի սփիւռքում այդ բոլոր ուժերի հետ, հաշուի առնելով նրանց կարծիքն ու առաջարկները: Պէտք է աջակցի սփիւռքում աշխատող բոլոր մշակութային, հասարակական եւ կրթական հաստատութիւններին՝ անկախ նրանց քաղաքական հայեացքներից:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶ-ՄԱՆ ՀԱՐՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ՍՓԻՒՌ-ԻՆՉ ԵՎ ԹԷ՞ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Յեղասպանութեան ճանաչման հարցի առաջատարը պէտք է լինի սփիւռքն ու Հայաստանի ոչ պետական՝ գիտական եւ քաղաքական հաստատութիւններն ու կազմակերպութիւնները, քանի որ Հայաստան պետութիւնն այդ հարցը բարձրացնելով բարդացնում է իր հարեւանների հետ յարաբերութիւնների կարգաւորման հարցը:

Յեղասպանութեան ճանաչման խնդրի վերաբերեալ պէտք է ստեղծուի նախ եւ առաջ համահայկական համաշխարհային (առանց Հայաստան պետութեան պաշտօնական մասնակցութեան ու միջամտութեան) մէկ հաստատութիւն, որը ի վիճակի կը լինի համադրելու եւ մէկ քաղաքականութեամբ այդ հարցը առաջ մղելու: Անընդհատ «Հայ Դատի գրասենեակներ» բացելով այդ խնդրի լուծմանը չենք օգնի:

«Սփիւռքի Նախարարութիւն» ստեղծելով չէ, որ Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնները կը կարգաւորուեն: Հայաստանի կառավարութեան կողմից հաշուի առնելով վերը նշուած բոլոր փաստերը եւ համապատասխան քաղաքականութիւն մշակելով է, որ կարելի է նպաստել Սփիւռք-Հայրենիք ճիշտ յարաբերութիւններին: Սփիւռքի քաղաքական իրական կեանքի փաստը հաշուի չառնելը, անուշադրութեան մատնելն ու միակողմանի պետական շահի հետապնդումը չի նպաստի սփիւռք-հայրենիք յարաբերութիւններին: Ու այդ դէպքում «Սփիւռքի Նախարարութիւնը» կը դառնայ ինքնանպատակ եւ աւելորդ ծախսերի եւս մի կառույց:

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

FRIDAY NIGHTS AT ATLANTIS
ARABIAN NIGHTS

ENJOY A NIGHT OF MIDDLE EASTERN MUSIC, DANCING AND ENTERTAINMENT EVERY FRIDAY NIGHT AT ATLANTIS. ATLANTIS IS FULLY EQUIPPED WITH A REMARKABLE COCKTAIL BAR, HOOKAH BAR AND LIVE DJ.

EVERY FRIDAY, BE SURE TO WITNESS OUR LIVE BELLY DANCING SHOW FEATURING WORLD FAMOUS HELINA AND THE SAHILAH DANCERS.

authentic cuisine
full hookah bar
VIP membership
full cocktail bar
live belly dancing
live music and DJ

ATLANTIS
RESTAURANT AND NIGHT CLUB

626.449.4599
162 N. SIERRA MADRE BLVD.
PASADENA, CA 91107

ՄԱՐԶԱԿԱՆ

ՓԵՔԻՆԸ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՄԲԻՇՆԵՐԸ ԵՒ ԾԱՆՐՈՐԴՆԵՐԸ ՆՈՒԱՃԵՑԻՆ 5 ԲՐՈՆՁԷ ՄԵՏԱԼ

8 տարուայ ընդմիջումից յետոյ Հայաստանը օլիմպիական խաղերում կրկին մետալի արժանացաւ: Վերջին անգամ նման յաջողութեան հայ մարզիկներն ունեցել էին 2000թ. Սիտնիյում կայացած խաղերում, երբ ծանրամարտում բրոնզէ մետալի էր արժանացել Արսէն Մելիքեանը:

ԸՄԲԻՇՆԵՐ ՌՈՍՄԱՆ ԱՄՈՅԵԱՆ ԵՒ ԵՌԻՐԻ ՊԱՏՐԻԿԵՆԻ

Յունահունական ոճի ըմբաշարտի մրցաշարում Հայաստանի հաւաքականը, որի կազմում



Ռոման Ամոյեան

ընդգրկուած էին 6 ըմբիշներ, 2 բրոնզէ մետալի արժանացաւ:

Հայաստանից առաջին մետալը նուաճեց: Նման պատուի արժանացաւ յունահունական ոճի ըմբիշ Ռոման Ամոյեանը, որը 55 կգ քաշայինների պայքարում արժանացաւ բրոնզէ մետալի:


1/8-րդ եզրափակիչում Ռոման Ամոյեանը հանդիպեց Ասետ Իմանբաեի (Ղազախստան) հետ եւ յաղթեց 7:2 հաշուով: Քառորդ եզրափակիչում հայ ըմբիշը մրցեց Վրաստանի ներկայացուցիչ Լաշա Գոգիտաձէի հետ եւ կրկին յաղթեց՝ այս անգամ 7:3 հաշուով: Կիսաեզրափակիչում Ամոյեանի մրցակիցը Ատրպէյճանը ներկայացնող Ովչան Բայրամովն էր, որին Ռոմանը զիջեց 3:11 հաշուով: Բրոնզէ մե-

տալի համար պայքարում Ամոյեանը 8:0 հաշուով առաւելութեան հասաւ Քուպայի ներկայացուցիչ Եաքնիեր Հեռնանդէսի նկատմամբ: 120 կգ քաշային Եուրի Պատրիկեանը եւս բրոնզէ մետալ նուաճեց:

Նա այս քաշային կարգում դասում էր ֆաւորիտների շարքին, սակայն վիճակահանութիւնը խիստ անյաջող ստացուեց Հայաստանը ներկայացնող ըմբիշի համար: Արդէն քառորդեզրափակիչում նա պէտք է մրցեր աշխարհի ախոյեան Լուպեսի (Քուպա) հետ: Պարտուելով այս մրցամարտում Պատրիկեանը պայքարը շարունակեց բրոնզէ մետալի համար պայքարում, որի համար որոշիչ մրցամարտում յաղթեց Շուեդիայի ներկայացուցիչ Եալմար Սիոբերգին:

ԾԱՆՐԱՄԱՐՏԻԿՆԵՐ ՏԻԳՐԱՆ Գ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ, ԳԷՈՐԳ ԴԱԻԹԵԱՆ ԵՒ ՏԻԳՐԱՆ Վ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Հայաստանի ծանրամարտի հաւաքական կազմում ընդգրկուած էին 6 ծանրորդներ, որոնցից 3-ին յաջողուեց արժանանալ մետալի: 69 կգ քաշայինների պայքարում



Եուրի Պատրիկեան

բրոնզէ մետալի արժանացաւ Տիգրան Գ. Մարտիրոսեանը, 77 կգ քաշայինների պայքարում՝ Գէորգ Դաւթեանը, 84 կգ քաշայինների պայքարում՝ Տիգրան Վ. Մարտիրոսեանը:

69կգ քաշային կարգում ծան-

րորդ Տիգրան Գ. Մարտիրոսեանը Պոկում վարժութիւնում կարողացաւ բարձրացնել 153կգ-անոց ծանրաձողը: Հայ ծանրորդի մարզիչներն այս արդիւնքից յետոյ պատուիրեցին 156կգ, որը սակայն Մարտիրոսյանը չկարողացաւ բարձրացնել յաջորդ 2 փորձերի ժամանակ:

Հրում վարժութիւնում Տիգրան Մարտիրոսեանի համար սկզբում պատուիրուած էր 180 կգ, սակայն ի վերջոյ Տիգրանը սկսեց 183 կգ-ից եւ անյաջողութեան մատնուեց առաջին մօտեցման ընթացքում: Տեսնելով, որ մրցակից-



Տիգրան Գ. Մարտիրոսեան



Գէորգ Դաւթեան

ները աւելի բարձր քաշեր են պատուիրում, Մարտիրոսեանի մարզիչները պատուիրեցին 185 կգ, որը նա յաղթահարեց 2-րդ փորձից եւ երկամարտի 338 կգ արդիւնքով գրաւեց 3-րդ հորիզոնականը: Նոյնքան կգ բարձրացրեց նաեւ Փրանսայի ներկայացուցիչ Վենսելես Դաբայան, սակայն Տիգրան անձնական քաշով աւելի ծանր էր մրցակցից, ուստի զրկուեց արծաթէ մետալից: Ախոյեանի կոչումը նուաճեց չինացի Հուի Լիաոն, որը երկամարտում ցոյց տուեց 348 կգ:

77կգ քաշային ծանրորդ Գէորգ Դաւթեանն երկամարտի 360 կգ արդիւնքով դարձաւ բրոնզէ մետալակիր:

Պոկում վարժութիւնում Գէորգ Դաւթեանը պատուիրուած 195 կգ-ն կարողացաւ բարձրացնել միայն 3-րդ փորձից: Հրում վարժութիւնում Գէորգ Դաւթեանը կարողացաւ բարձրացնել միայն 195կգ - անոց ծանրաձողը, իսկ ահա 201 կգ - ն գլխավերելում մեր ծանրորդին պահել չյաջողուեց, այլպէս Գէորգն արծաթով կը վերադառնար Հա-



յաստան: Ախոյեանի կոչումը այս քաշային կարգում նուաճեց քորէացի Յանսուկ Սան, որը երկամարտում ցոյց տուեց 366 կգ: Չինացի Լի Հոնգլին եւս 366 կգ արդիւնք ցոյց տուեց երկամարտում, սակայն



Տիգրան Վ. Մարտիրոսեան

անձնական քաշով աւելի ծանր էր ախոյեանից:

77կգ քաշային կարգում հանդէս էր գալիս նաեւ Արա Սաչատրեանը որը գբաղեց 7-րդ հորիզոնականը, ինչը կարելի է ձախողում համարել այս ծանրորդի համար:

Հայաստանի օլիմպիական հաւաքականից 5-րդ բրոնզէ մետալը նուաճեց 84 կգ քաշային ծանրորդ Տիգրան Վ. Մարտիրոսեանը: Այս քաշային կարգում հանդէս եկաւ նաեւ էրզրան Գէորգեանը, որի ելույթը անյաջող էր:

Պոկում վարժութիւնում Տիգրան Մարտիրոսեանը սկսեց 172 կգ-ից, ապա բարձրացրեց 177 կգ, սակայն 180 կգ-ն պահել գլխավերելում հայ ծանրորդին չյաջողուեց:

Հրում վարժութիւնը Տիգրան Մարտիրոսեանը պէտք է բարձրացնէր 203 կգ: Առաջինը փորձը անյաջող ստացուեց, սակայն 2-րդ մօտեցման ժամանակ Մարտիրոսեանին յաջողուեց կատարել առաջադրանքը: Այս մոտեցմամբ Տիգրան Մարտիրոսեանը ապահովեց իր տեղը լաւագոյն եռեակում:

ԱՐԹՈՒՐ ԱՅՎԱԶԵԱՆԸ՝ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԱՆՈՅԵԱՆ

Ուքրաինան ներկայացնող հայագի մարզիկ Արթուր Այվազեանը օլիմպիական ախոյեան է դարձել գնդակային հրաձգութիւնից՝ 50 մետր հեռակրութիւնից հաւաքելով 702,5 միակոր:

35-ամեայ Արթուր Այվազեանը ծնունդով Երեւանից է, սպորտով զբաղուած է արդէն 23 տարի, ներկայումս ծառայում է բանակում:

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆԵԱՆԸ ԲՐՈՆՁ ՆՈՒԱՃԵՑ ՈՒՔՐԱԻՆԱՅԻ ՀԱՄԱՐ

Ուքրաինայի հաւաքականի կազմում ընդգրկուած 66կգ քաշային յունահունական ոճի ըմբիշ Արմէն Վարդանեանը, Փեքինում բրոնզէ մետալի արժանացաւ:

26-ամեայ գիւմրեցի մարզիկը 1999թ. Գիւմրիից տեղափոխուել է Զապորոժյէ եւ Ստանալով Ուքրաինայի քաղաքացիութիւն՝ վերջին 9 տարիներին հանդէս է եկել այդ երկրի դրօշի ներքոյ:

ԱՐԱ ԱԲՐԱՅԱՍԵԱՆԸ ԶՐԿՈՒԵՑԱՒ ԲՐՈՆՁԷ ՄԵՏԱԼԻՑ

Միջազգային օլիմպիական կոմիտէն որակագրկել է Շուէտիան ներկայացնող հայագի մարզիկ Արա Աբրահամեանին՝ ոչ սպորտային պահուածքի համար, եւ հետ է վերցրել Փեքինի Օլիմպիադայում նրան շնորհուած բրոնզէ մետալը:

Յունահունական ըմբշամարտի մրցաշարում 84 կիլոգրամ քաշային կարգում հանդէս եկած Աբրահամեանը Հինգաբթի օրը մասնակցել էր պարզեւատրման արարողութեանը եւ ստացել մետալը, ինչից յետոյ իջել էր պատուանդանից, շարտել մետալը մրցազորգի վրայ եւ հեռացել: Այդ քայլով նա իր բողոքն էր արտայայտել մրցավարների դէմ, որոնք, նրա համոզմամբ՝ անարդարացիօրէն, կիսաեզրափակիչում յաղթանակը շնորհել էին իր մրցակցին՝ իտալացի Անդրէա Մինգոլցիին, որն էլ դարձել է օլիմպիական ախոյեան:

«Ինձ պէտք չէ այս մետալը, ես ոսկի էի ուզում», - յայտարարել էր Աբրահամեանը:

“The Friends of Armenian Arts” Proudly Presents “BRAVO” TBILISI ARMENIAN THEATRE

TBILISI'S PETROS ADAMYAN STATE ARMENIAN DRAMATIC THEATRE

«Կեցցե՛ք»

Exclusive stop in Los Angeles during a National Tour

Թիֆլիսի Պետրոս Ադամյանի անուան Պետական Հայկական
Դրամատիկական Թատրոնի հիւրախաղերը Միացեալ Նահանգներում

Թող Որ Այս ներկայացումները Մեր Սրտերը Գերե՛ն....

Let These Performances Touch Our Hearts



Pepo

Պեպո

SATURDAY SEPTEMBER 6, 7:00 P.M.



Աղջկա
Փեսայուները

My
Daughter's
Fiances

SUNDAY SEPTEMBER 7, 7:00 P.M.



Love
Under
The Elms

Արք Տիփիների

SATURDAY SEPTEMBER 27, 7:00 P.M.



Be Healthy

Դուր Ողջ Լինել

SUNDAY SEPTEMBER 28, 7:00 P.M.



Khataballa

Խաթաբալա

SUNDAY OCTOBER 5, 7:00 P.M.



The
Guards of
Ruins

Աւերակների
Պահակները

SUNDAY OCTOBER 12, 7:00 P.M.

SIX DIFFERENT DAYS! SIX DIFFERENT PLAYS!

ONE CHANCE TO SEE EACH PLAY



GLENDALE HIGH SCHOOL AUDITORIUM

1440 E. BROADWAY, GLENDALE, CA

Mail delivery: **818.637.2191** • Tickets free delivery: **818.265.0506**

Get your tickets on line at: **itsmyseat.com** • Recorded event message: **818.487.5563**

www.bravotbilisiarmeniantheatre.com

RESERVE YOUR TICKETS TODAY Tickets: \$25, \$30, \$40, \$50, \$100

Group discounted tickets are available